*ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ*

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Բրյուսել, 19.04.2002թ.
COM(2002) 196 final

# ԿԱՆԱՉ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

## Քաղաքացիական և առևտրային իրավունքի ոլորտում վեճերի լուծման այլընտրանքային (ՎԼԱ) մեխանիզմների մասին

(ներկայացվել է Հանձնաժողովի կողմից)

**Ошибка! Неизвестное имя свойства документа.**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԿԱՆԱՉ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆՊԱՏԱԿԸ........................................................................................................4

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ......................................................................................................................5

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ...........................................................................................6

1.1 Մոտեցումների զանազանությունը......................................................................................6

1.2 Արդարադատությունը՝ ավելի մատչելի.................................................................................7

1.3 Քաղաքական գերակայություն ...........................................................................................9

1.4 Արդիական խնդիր ..........................................................................................................10

1.5 Միջազգային տարածաչափ ...............................................................................................11

1.6 Առանցքային մանդատ .....................................................................................................12

2. ԱՐԴԵՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ՕԳՈՒՏՆԵՐ ՔԱՂԵԼԸ ....................................................12

2.1 Անդամ պետություններում................................................................................................13

2.1.1 ՎԼԱ մեխանիզմները դատական վարույթների համատեքստում..............................................14

2.1.2 ՎԼԱ պայմանագրային մեխանիզմները...............................................................................15

2.2 Եվրոպական միության մակարդակով...................................................................................16

2.2.1 Սպառողների շահերի պաշտպանության իրավունքի ոլորտում նախաձեռնություններից օգուտներ քաղելը .....................................................................................................................................**16**

2.2.2 Ընտանեկան իրավունքի ոլորտում նախաձեռնություններից օգուտներ քաղելը.......................................................................................................... 20

2.2.3 Աշխատանքային հարաբերությունների ոլորտում ՎԼԱ մեխանիզմների զարգացման խթանումը ..........................................................................................................22

3. ՎԼԱ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ.......................................................................23

3.1 Ի՞նչ մոտեցում պետք է որդեգրել.........................................................................................23

3.2 Ընդհանուր մոտեցումը ՎԼԱ մեխանիզմների նկատմամբ .......................................................24

3.2.1 ՎԼԱ մեխանիզմները և արդարադատության մատչելիությունը..................................................24

3.2.1.1 ՎԼԱ մեխանիզմների դիմելու կարգը................................................................................24

3.2.1.2 Հայցային վաղեմության ժամկետները..............................................................................26

3.2.2 Որակի նվազագույն չափանիշները....................................................................................26

3.2.2.1 Գաղտնիությունը ........................................................................................................28

3.2.2.2 Համաձայնության վավերությունը....................................................................................30

3.2.2.3 ՎԼԱ մեխանիզմների արդյունավետությունը......................................................................30

3.2.3 Երրորդ անձինք պե՞տք է ունենան որոշակի կարգավիճակ ......................................................32

3.2.3.1 Երրորդ անձանց վերապատրաստումը...............................................................................32

3.2.3.2 Երրորդ անձանց հավատարմագրումը ........................................................................ 33
3.2.3.3 Երրորդ անձանց պատասխանատվությունը ................................................................ 33
ՀԱՐՑԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ............................................................................................................ 35

## ԿԱՆԱՉ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆՊԱՏԱԿԸ

Սույն Կանաչ փաստաթղթի (Green Paper) նպատակն է նախաձեռնել ընդգրկուն խորհրդակցություններ նրանց միջև, ովքեր զբաղվում են քաղաքացիական և առևտրային իրավունքի ոլորտում վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների վերաբերյալ ծագած որոշակի իրավական հարցերով:

Առանձին հարցերի պատասխանները և ընդհանուր մեկնաբանությունները կարելի է մինչև 2002 թվականի հոկտեմբերի 15-ը ուղարկել հետևյալ հասցեով.

European Commission
Justice and Home Affairs Directorate-General
Unit A3 - Judicial cooperation in civil matters
Office LX 46 5/152
B-1049 Brussels
Belgium
Fax: + 32 2 299 64 57
E-mail: JAI-coop-jud-civil@cec.eu.int

Հանձնաժողովը մտադիր է այս թեմայով հանրային լսումներ անցկացնել 2003 թվականի սկզբին:

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ


Եվրոպական միությունում վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների (ՎԼԱ մեխանիզմներ) նկատմամբ հետաքրքրությունն աճում է երեք հիմնական պատճառներով:

Նախևառաջ, բարձրացել է ՎԼԱ մեխանիզմների մասին իրազեկության աստիճանը՝ որպես առօրյա կյանքում արդարադատության ընդհանուր մատչելիության աստիճանը բարձրացնող միջոց:

Երկրորդ, ՎԼԱ մեխանիզմները մեծ ուշադրության են արժանացել անդամ պետությունների կողմից, որոնցից շատերն ընդունել են ՎԼԱ մեխանիզմները խրախուսող օրենսդրություն:

Երրորդ, ՎԼԱ մեխանիզմները քաղաքական գերակայություն են, որի մասին բազմիցս հայտարարել են Եվրոպական միության կառույցները, որոնց խնդիրն է խթանել նման այլընտրանքային միջոցների կիրառումը, ապահովել դրանց զարգացման համար բարենպաստ միջավայր և անել հնարավոր ամեն ինչ՝ որակ երաշխավորելու համար: Քաղաքական այս գերակայությունը մասնավորապես ընդգծվել է տեղեկատվական հասարակության համատեքստում, որտեղ վեճերի առցանց լուծման (ՎԱԼ) նոր ծառայությունները ճանաչվել են որպես ինտերնետի միջոցով միջսահմանային վեճերի լուծման միջոց:

Նման համատեքստում հասկանալի է սույն Կանաչ փաստաթղթի մշակման քաղաքական հիմնավորվածությունը: Խորհուրդը դիմել է Հանձնաժողովին այնպիսի Կանաչ փաստաթուղթ մշակելու խնդրանքով, որը կներկայացնի առկա իրավիճակը և իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ ընդգրկուն խորհրդակցությունների հիմք կդառնա:

Սույն Կանաչ փաստաթուղթը հնարավորություն է ընձեռում հանրության հնարավոր ամենալայն շրջանակներին ծանոթացնել ՎԼԱ մեխանիզմներին, ինչպես նաև ավելի ակնառու դարձնել անդամ պետությունների և Համայնքի նախաձեռնությունները:

Կանաչ փաստաթղթի վերաբերյալ հանրության հետ խորհրդակցելու նպատակն է պարզել շահագրգիռ բոլոր շրջանակների ընդհանուր կարծիքը և նրանց արձագանքն այստեղ արծարծված հարցերին:

Այս հարցերը հիմնականում իրավական են և վերաբերում են ՎԼԱ մեխանիզմների ակնառու առանձնահատկություններին, ինչպիսիք են՝ պայմանագրերում ՎԼԱ մեխանիզմներին վերաբերող դրույթների առկայությունը, հայցային վաղեմության ժամկետները, գաղտնիության վերաբերյալ սահմանափակումները, տրված համաձայնության վավերությունը, ՎԼԱ ընթացակարգերում ձևավորված համաձայնության արդյունավետությունը, երրորդ անձանց վերապատրաստումն ու հավատարմագրումը, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը կարգավորող նորմերը:

Հանձնաժողովը մտադիր է հաշվի առնել արտահայտված տեսակետները՝ օրենսդրական և գործառնական նախաձեռնություններ խթանողի կարգավիճակում մոտակա տարիներին իր կողմից իրականացվելիք քաղաքականության ընդհանուր ուղղությունները սահմանելիս:

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1.1 Մոտեցումների զանազանությունը

1. Վերջին տարիներին անդամ պետություններում որոշակի զարգացումներ են արձանագրվել վեճերի կարգավորման կամ լուծման «այլընտրանքային» միջոցների բնագավառում՝ չնայած այն համընդհանուր կարծիքին, որ դրանք շատ են հնացել: Մասնավոր արդարադատության այս ձևերի առավելությունները և արդարադատության արդյունավետությունը սահմանափակող ճգնաժամը նոր հետաքրքրություն են առաջացրել վեճերի լուծման այս այլընտրանքային մեխանիզմների նկատմամբ, որոնք ավելի փոխզիջումային են, քան դատարան կամ արբիտրաժի դիմելը: Համայնքում զգալի ջանք է գործադրվել դրանց զարգացումը կարգավորելու համար, մասնավորապես տեղեկատվական հասարակության համատեքստում, քանզի դա թույլ կտա բարձրացնել սպառողների և փոքր ու միջին ձեռնարկությունների վստահությունն էլեկտրոնային առևտրի նկատմամբ:

2. Սույն Կանաչ փաստաթղթի իմաստով, «վեճերի լուծման այլընտրանքային մեթոդներ» հասկացությունը սահմանվում է որպես վեճերի արտադատական լուծման ընթացակարգ, որն իրականացնում է չեզոք երրորդ կողմը՝[1] բացառությամբ բուն արբիտրաժի:[2] Ուստի, վեճերի լուծման այլընտրանքային մեթոդների մասին խոսելիս սույն փաստաթղթում կօգտագործվի գործնականում գրեթե համընդհանուր ճանաչում

---

[1] Այս սահմանման արդյունքում սույն Կանաչ փաստաթղթի շրջանակից դուրս են թողնվում հետևյալ ընթացակարգերը.

- փորձագիտական եզրակացություններ, որոնք վեճերի լուծման մեթոդ չեն, այլ՝ օրինակ, դատական կամ արբիտրաժային վարույթի շրջանակներում օժանդակություն ստանալու նպատակով փորձագետին դիմելու ընթացակարգ,
- բողոքների քննության այն համակարգերը, որոնք սպառողներին առաջարկում են մասնագետները. այս ընթացակարգերն իրականացնողը երրորդ անձը չէ, այլ՝ վեճի մասնակիցներից մեկը,
- «ավտոմատացված բանակցային համակարգեր», որոնք չեն ներառում մարդկային որևէ մասնակցություն և առաջարկվում են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ծառայություններ մատուցողների կողմից. այս համակարգերը վեճերի լուծման՝ երրորդ անձանց կողմից իրականացվող ընթացակարգեր չեն, այլ՝ տեխնիկական գործիքներ, որոնց նպատակն է հեշտացնել վեճի մասնակիցների միջև ուղղակի բանակցությունները:

[2] Արբիտրաժը ավելի շատ նման է քվազիդատական ընթացակարգի, քան ՎԼԱ մեխանիզմի, քանի որ արբիտրների վճիռները փոխարինում են դատական ակտերին: Արբիտրաժն անդամ պետություններում կարգավորվում է օրենսդրական մի շարք ակտերով, իսկ միջազգային մակարդակով՝ տարբեր համաձայնագրերով, ինչպիսիք են «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու-Յորքի 1958թ. կոնվենցիան (http://www.uncitral.org/en-index.htm), կամ, Եվրոպայի խորհրդի շրջանակում, 1966թ. «Արբիտրաժի մասին միասնական իրավական նորմեր նախատեսող եվրոպական կոնվենցիան» (http://conventions.coe.int/Treaty/EN/cadreprincipal.htm):

գտած «ՎԼԱ մեխանիզմներ» (անգլերեն “ADR”) հապավումը:[3] Սույն Կանաչ փաստաթուղթը վերաբերում է միայն քաղաքացիական և առևտրային գործերով ՎԼԱ մեխանիզմներին՝ ներառյալ աշխատանքային իրավունքը և սպառողական իրավունքը:[4]

3. Քաղաքացիական և առևտրային իրավունքի նորմերով կարգավորվող՝ վեճերի լուծման այլընտրանքային միջոցները կարող են դասակարգվել տարբեր տեսակների՝ կախված կոնկրետ իրավական մոտեցումից: Նախ, պետք է տարբերակել ՎԼԱ մեխանիզմը, որը կիրառվում է դատարանի կողմից կամ դատարանի կողմից պատվիրակվում երրորդ անձի («ՎԼԱ մեխանիզմ դատական վարույթի շրջանակում»), և այն ՎԼԱ մեխանիզմը, որը վեճի կողմերն օգտագործում են արտադատական ընթացակարգի միջոցով («ՎԼԱ պայմանագրային մեխանիզմ»): Հանձնաժողովի կարծիքով նույնչափ հիմնարար մեկ այլ տարբերակում է պետք կատարել ՎԼԱ պայմանագրային մեխանիզմների տարբեր տեսակների միջև: ՎԼԱ-ի որոշ ընթացակարգերի համաձայն՝[5] կարող են ներգրավվել վարույթի համար պատասխանատու երրորդ անձ կամ անձինք, որպեսզի կողմերից մեկի համար պարտադիր որոշում[6] կայացնեն կամ կողմերին առաջարկություն ներկայացնեն, որին հետևելու կամ չհետևելու հարցում կողմերն ազատ են:[7] Կան նաև ՎԼԱ այլ ընթացակարգեր, որոնց դեպքում երրորդ անձը ֆորմալ առումով դիրքորոշում չի հայտնում վեճի լուծման հնարավոր ձևերի մասին, այլ պարզապես օգնում է կողմերին համաձայնության հասնել:[8]

---

3 Ներպետական պրակտիկայի և օրենսդրության մեջ առավել հաճախ օգտագործվող հասկացությունները (միջնորդություն և հաշտեցում) սույն Կանաչ փաստաթղթում համակարգված գործածություն չեն ունենա, այլ կկիրառվեն միայն որոշակի ներպետական օրենսդրության կամ միջազգային կազմակերպության կողմից իրականացվող որոշակի աշխատանքի համատեքստում:

4 Սույն Կանաչ փաստաթուղթը չի անդրադառնում այնպիսի խնդիրների, որոնք առնչվում են հանրային քաղաքականության հետ կապված չփոխանցվող իրավունքներին, ինչպիսիք են, օրինակ՝ անձանց վերաբերյալ իրավունքի և ընտանիքի իրավունքի որոշ դրույթներ, մրցակցության իրավունքը և սպառողական իրավունքը, որոնք չեն կարող ՎԼԱ մեխանիզմների առարկա դառնալ:

5 ՎԼԱ-ի այս երկու տեսակները «Սպառողական վեճերի արտադատական լուծման համար պատասխանատու մարմինների վրա տարածվող սկզբունքների մասին» Հանձնաժողովի 1998 թ. մարտի 30-ի թիվ 98/257/ԵՀ առաջարկության առարկան են (ՊՏ L 115, 17.04.1998թ., էջ 31): Նշված առաջարկությունն անդրադառնում է նաև արբիտրաժին:

6 Ինչպես և հաճախ է պատահում մասնագիտական գործունեության որոշ հատվածների, օրինակ՝ բանկերի և ապահովագրական ընկերությունների կողմից ստեղծված հաճախորդների օմբուդսմանների դեպքում: Օմբուդսմանների որոշումները պարտադիր են համակարգի հետ առնչություն ունեցող ընկերությունների համար:

7 Սկանդինավյան պետություններում գործող՝ Սպառողների բողոքները քննող հանձնաժողովների նման:

8 Սպառողական բնագավառում այսպիսի ընթացակարգը «Սպառողական վեճերը փոխհամաձայնությամբ լուծելու համար պատասխանատու արտադատական մարմինների վրա տարածվող սկզբունքների մասին» Հանձնաժողովի 2001 թ. ապրիլի 4-ի 2001/310/ԵՀ առաջարկության առարկան է (ՊՏ L 109, 19.04.2001թ., էջ 56):

4. ՎԼԱ մեխանիզմները նոր երևույթ չեն, բայց վերջին տարիներին գնալով ավելի շատ տարածում են ստացել և տարբեր դիտորդների կողմից աստիճանաբար ավելի մեծ ուշադրության արժանացել: ՎԼԱ մեխանիզմների դիտարկման և (կամ) զարգացման գործում պետական մարմիններին զգալի օգնություն են ցուցաբերում թե՛ համաժողովրդական նախաձեռնությունների (grass-roots initiatives[9]) ընդլայնումը, թե՛ մեծածավալ ակադեմիական գրականությունը:

**1.2 Արդարադատությունը՝ ավելի մատչելի**

5. ՎԼԱ մեխանիզմների զարգացումը պայմանավորող գործոններից մեկը գործնական և կոնյունկտուրային բնույթ ունի: ՎԼԱ մեխանիզմները լուծում են առաջարկում արդարադատության մատչելիության խնդրին, որին բախվում են շատ երկրների քաղաքացիներ՝ պայմանավորված երեք գործոնով. դատարաններ հանձնվող վեճերի ծավալն աճում է, վարույթները դառնում են ավելի երկարատև, և վարույթների շրջանակում կատարվող ծախսերն ավելանում են: Բացի այդ, արդարադատության հասանելիությունը սահմանափակվում է նաև օրենսդրության մեծածավալության, բարդության և տեխնիկական առումով անհստակության պատճառով:

6. Միջսահմանային վեճերի հետ կապված վարույթները, որպես կանոն, ավելի երկար են տևում և կապված են ավելի մեծ դատական ծախսերի հետ, քան ներպետական վեճերը:[10] Ներքին շուկայի ձևավորման, առևտրի ծավալների մեծացման և քաղաքացիների շարժունության պայմաններում, անկախ խնդրի կարևորությունից կամ դրամական արժեքից, տարբեր անդամ պետությունների քաղաքացիների և տարբեր անդամ պետությունների ռեզիդենտների միջև վեճերի թիվն ավելանում է՝ պայմանավորված միջսահմանային էլեկտրոնային առևտրի ծավալների ընդլայնմամբ, որին զուգահեռ աճում է դատարաններ ներկայացվող միջսահմանային վեճերի թիվը: Դատարանների գերբեռնման՝ գործնական խնդրից բացի, այդ վեճերը հաճախ բարդ հարցեր են առաջ քաշում, որոնք կապված են իրավական համակարգերի և իրավասության բախումների, ինչպես նաև գործնական բնույթի, օրինակ՝ ֆինանսական և լեզվական դժվարությունների հետ:

7. Բոլորի համար արդարադատության մատչելիության հիմնարար իրավունքն ամրագրված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում: Արդարադատության եվրոպական դատարանը վճռել է, որ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը Համայնքի իրավունքի

---

9 Սրանցից շատերը սկիզբ են առել երկար ժամանակ առաջ, օրինակ՝ 1994 թ. ստեղծված՝ Տնտեսական շահերի եվրոպական խումբը (European Economic Interest Grouping), որը Ֆրանսիայի, Իտալիայի, Իսպանիայի և Միացյալ Թագավորության արբիտրաժային և միջնորդ կենտրոնների ցանց է: Այս «Վեճերի լուծման եվրոպական ցանցը» (“European Network for Dispute Resolution” (ENDR)) ֆինանսական օժանդակություն է ստացել Համայնքից, որը կառավարվել է Հանձնաժողովի XXIII գլխավոր տնօրինության (Փոքր և միջին ձեռնարկությունների գլխավոր տնօրինություն) կողմից:

10 Այս հարցերին առնչվող մանրամասների համար տե՛ս, մասնավորապես, «Դատական համագործակցությունը քաղաքացիական գործերի շրջանակում. միջսահմանային վեճի մասնակցի առջև ծագող հիմնախնդիրները» վերտառությամբ Հանձնաժողովի 2000 թ. փետրվարի 9-ի Կանաչ փաստաթուղթը, COM(2000)51 final:

ընդհանուր սկզբունքներից է,[11] որը որպես այդպիսին հռչակված է Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիայի 47-րդ հոդվածով: Արդարադատության մատչելիությունը պարտավորություն է, որն անդամ պետությունները կատարում են՝ արագ և ոչ թանկարժեք իրավական վարույթներ ապահովելու միջոցով: Ավելին, որոշ անդամ պետություններ պարտավորվել են արդիականացնել իրենց իրավական համակարգը՝ պարզեցնելով դիմելու ընթացակարգերը կամ նախատեսելով էլեկտրոնային միջոցներով հայց հարուցելու հնարավորությունը:[12]

8. Եվրոպական միությունը փորձում է ավելի մատչելի դարձնել արդարադատությունը՝ իրականացնելով մի շարք միջոցառումներ, ինչպիսին է օրինակ՝ մատչելի արդարադատության մասին տեղեկատվական համակարգի ստեղծումը, որը պահպանվում և թարմացվում է ազգային իրավասու մարմինների ցանցի[13] կողմից: Նշված փորձերը գումարվում են փոխադարձ ճանաչման սկզբունքի հիման վրա արդարադատության եվրոպական տարածք ստեղծելու ուղղությամբ արդեն ձեռնարկված միջոցառումներին, որոնցից են, օրինակ, էկզեկվատուրայի ընթացակարգերի[14] հեշտացման համար իրականացված միջոցառումները, չվիճարկվող վարկերի դեպքում էկզեկվատուրան բացառելու, ինչպես նաև փոքր հայցերի հետ կապված միջսահմանային վեճերի լուծումը պարզեցնելու և արագացնելու նպատակ հետապնդող նախաձեռնությունները:[15]

---

11 Գործ համար 222/84, *Johnston* [1986] ECR 1651 (վճիռը կայացվել է 15.05.1986թ.):

12 Փոքր հայցերի առնչությամբ այս հնարավորությունը գործում է Գերմանիայում, Դանիայում, Ֆինլանդիայում և Անգլիայում: Սույն տեղեկատվությունը ստացվել է փոքր հայցերի նկատմամբ կիրառելի իրավական ընթացակարգերի մասին 2000թ. սեպտեմբերին Հանձնաժողովի կողմից անդամ պետություններին ուղարկված հարցաշարին վերջիններիս տված պատասխաններից:

13 «Քաղաքացիական և առևտրային գործերով Եվրոպական դատական ցանց ստեղծելու մասին» Խորհրդի 2001թ. մայիսի 28-ի թիվ 2001/470/ԵՀ որոշումը, ՊՏ L 174, 27.06.2001թ., էջ 25: Նշված որոշման 14-րդ հոդվածի համաձայն՝ ներդրվելու է «ինտերնետային տեղեկատվական համակարգ հանրության համար», որը մասնավորապես ներառելու է տեղեկատվական թերթիկներ, որոնց մի մասը վերաբերելու է «վեճերի լուծման այլընտրանքային հնարավորություններին»՝ նշելով Սպառողական վեճերի արտադատական լուծման համայնքային ցանցի տեղեկատվական և խորհրդատվական ազգային կենտրոնները:

14 Հանձնաժողովի հաղորդագրությունը Խորհրդին և Եվրոպական պառլամենտին՝ «Եվրոպական միությունում վճիռների ստացման և կատարման արդյունավետության բարձրացումը» (“Towards greater efficiency in obtaining and enforcing judgments in the European Union”) վերտառությամբ, COM(97)609 final, 26.11.1997թ.: «Քաղաքացիական և առևտրային գործերով իրավասության և վճիռների ճանաչման ու կատարման մասին» Խորհրդի (ԵՀ) 2000թ. դեկտեմբերի 22-ի թիվ 44/2001 կանոնակարգը, ՊՏ L 12, 16.01.2001թ., էջ 1 (այսուհետ՝ «Բրյուսելի I կանոնակարգ»): Բացառությամբ Դանիայի՝ Բրյուսելի I կանոնակարգը փոխարինում է «Քաղաքացիական և առևտրային գործերով իրավասության և վճիռների ճանաչման ու կատարման մասին» Բրյուսելի 1968թ. կոնվենցիան (համախմբված տարբերակի համար տես ՊՏ C 27, 26.01.1998թ., էջ 1):

15 Այս խնդիրների վերաբերյալ տես, մասնավորապես, «Քաղաքացիական և առևտրային գործերով որոշումների փոխադարձ ճանաչման սկզբունքի կատարման մասին» Հանձնաժողովի և Խորհրդի միջոցառումների ծրագիրը, ՊՏ C12, 15.01.2001թ., էջ 1:

9. ՎԼԱ մեխանիզմներն արդարադատության մատչելիության բարձրացման նպատակ հետապնդող քաղաքականության անբաժանելի մասն են: Դրանք, ըստ էության, փոխլրացնում են դատական ընթացակարգերին՝ այնքանով, որքանով ՎԼԱ մեխանիզմների համատեքստում օգտագործվող մեթոդները հաճախ ավելի հարմար են վեճերի բնույթին: ՎԼԱ մեխանիզմները կարող են օգնել կողմերին երկխոսության մեջ մտնելու հարցում, ինչը նախկինում հնարավոր չէր, և ինքնուրույն պարզելու դատարան դիմելու հետ կապված ծախսերը:

10. Հարկ է ընդգծել ՎԼԱ մեխանիզմների դերը՝ որպես հասարակական ներդաշնակության հասնելու միջոց: ՎԼԱ այն ձևերի շրջանակում, որտեղ երրորդ անձինք որոշումներ չեն կայացնում, կողմերն առճակատման փոխարեն փորձում են վերականգնել իրենց դիրքորոշումները: Կողմերն իրենք են ընտրում վեճը լուծելու միջոցները և ավելի ակտիվ դեր են կատարում այս գործընթացում այնպես, որ իրենք են փորձում գտնել իրենց համար առավել հարմար լուծումը: Նման փոխհամաձայնեցված մոտեցման շնորհիվ ավելի մեծ է հավանականությունը, որ վեճը լուծելուց հետո կողմերը կկարողանան պահպանել իրենց առևտրային կամ այլ հարաբերությունները:

11. ՎԼԱ մեխանիզմները ճկուն են, այսինքն՝ կողմերն ազատ են՝ դիմելու ՎԼԱ մեխանիզմների, ընտրելու վարույթն իրականացնող կազմակերպությունը կամ անձին, սահմանելու ընթացակարգը, որոշելու մասնակցել վարույթին անձամբ կամ ներկայացուցչի միջոցով և, վերջապես, վճռելու վարույթի ելքը:

12. ՎԼԱ մեխանիզմների հետ կապված ծախսերը, որպես կարևոր գործոն, իհարկե, նույնպես հարկ է հաշվի առնել: Որպես կանոն՝ ծախսերը կրում են կողմերը: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ կողմերը ստիպված չլինեն վճարել ՎԼԱ մեխանիզմների հետ կապված ծախսերը: Օրինակ, հնարավոր է, որ ՎԼԱ ընթացակարգի համար պատասխանատու երրորդ անձինք չվճարվեն,[16] կամ ՎԼԱ մեխանիզմների համար պատասխանատու մարմինների գործառնական ծախսերը կրեն պետական մարմինները,[17] կամ մասնագիտական կազմակերպությունները,[18] կամ հնարավոր է, որ կողմերից մեկը և (կամ) մյուսն իրավասու լինեն ստանալու իրավաբանական օգնություն պետական միջոցների հաշվին:

13. Որոշ անդամ պետություններ անվճար իրավաբանական օգնություն են տրամադրում՝ ՎԼԱ ընթացակարգերի հետ կապված ծախսերը և իրավական ներկայացուցչության

---

Հանձնաժողովը մտադիր է 2002թ. առաջին կիսամյակում ներկայացնել չվիճարկվող հայցերի համար տրվող՝ կատարման եվրոպական որոշման ներդրման մասին կանոնակարգ ընդունելու առաջարկ, ինչպես նաև Կանաչ փաստաթուղթ, որի հիման վրա կմշակվի նոր դատավարական օրենսդրություն դրամական վճարումների մասին, ինչպես նաև փոքր հայցերի հետ կապված վեճերի մասին: Տես Եվրոպական միությունում ազատության, անվտանգության և արդարադատության տարածք ձևավորելու ուղղությամբ առաջընթացի գնահատման բալային համակարգի երկամյա վերանայումների մասին Հանձնաժողովի հաղորդագրությունը, COM(2001) 628 final, 30.10.2001թ.:

16 Ֆրանսիայում, օրինակ, արդարադատության հաշտարարները ( justice conciliators):

17 Իռլանդիայում, օրինակ, ընտանեկան միջնորդության ծառայությունը:

18 Շվեդիայում, օրինակ, ճանապարհային երթևեկության շրջանակներում պատճառված վնասի հարցերով զրասենյակը, որի աշխատանքային ծախսերը հոգում են ավտոմոբիլային ապահովագրական ընկերությունները:

ծախսերը հոգալու համար:[19] Հանձնաժողովն այս առումով արդեն նախաձեռնել է ներդաշնակեցնել անդամ պետությունների օրենսդրությունը «Անվճար իրավաբանական օգնության և քաղաքացիական դատավարության[20] հետ կապված այլ ֆինանսական խնդիրներին վերաբերող անդամ պետությունների որոշ օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի մոտարկման մասին» Խորհրդի հրահանգի նախագծում: Նշված նախագծի 16-րդ հոդվածի համաձայն՝ «Անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում է այն դեպքերում, երբ վեճը լուծվում է արտադատական ընթացակարգերով, եթե օրենքը նախատեսում է նման ընթացակարգեր, կամ եթե դատարանը վեճի կողմերին կարգադրում է դիմել նման ընթացակարգերի»:

## 1.3 Քաղաքական գերակայությունը

14. Եվրոպական խորհուրդը բազմիցս ընդգծել է, որ կարևորում է միջսահմանային վեճերի լուծման այլընտրանքային միջոցները, մասնավորապես, Վիեննայում 1998 թվականի դեկտեմբերին,[21] այնուհետ՝ Տամպերեում 1999 թվականի հոկտեմբերին՝ «Եվրոպական միությունում ազատության, անվտանգության և արդարադատության տարածքի ձևավորմանը» նվիրված հանդիպման ժամանակ:[22]

15. 2000 թվականի մարտին Լիսաբոնում կայացած Եվրոպական խորհրդի հանդիպմանը, որը նվիրված էր «Զբաղվածությանը և տեղեկատվական հասարակությանը», Եվրոպական խորհուրդն առաջարկեց «Հանձնաժողովին և Խորհրդին ուսումնասիրել, թե ինչպես է հնարավոր բարձրացնել սպառողների վստահությունը էլեկտրոնային առևտրի նկատմամբ, մասնավորապես՝ վեճերի լուծման այլընտրանքային համակարգերի միջոցով»:[23] Այս նպատակը վերահաստատվեց 2000 թվականի հունիսին Սանտա Մարիա դա Ֆեյրայում կայացած Եվրոպական խորհրդի հանդիպմանը, երբ հաստատվեց «Էլեկտրոնային Եվրոպա (e-Europe) 2002 գործողությունների ծրագիրը»:[24] 2001 թվականի դեկտեմբերին Բրյուսելում (Լայկեն)

---

[19] Ֆրանսիայում, օրինակ, անվճար իրավաբանական օգնություն կարող է տրամադրվել՝ գործարքային բանակցություններ վարող փաստաբանի վճարը հոգալու նպատակով:

[20] Առաջարկը ներկայացվել է 2001թ. հունվարի 18-ին, COM(2001) 13 final:

[21] Նախագահության եզրակացությունների 83-րդ պարբերություն. http://ue.eu.int/en/Info/eurocouncil/index.htm «Եվրոպական խորհուրդը հաստատում է Խորհրդի և Հանձնաժողովի գործողությունների ծրագիրը ազատության, անվտանգության և արդարադատության տարածքի ձևավորման մասին Ամստերդամի համաձայնագրի դրույթները լավագույնս կիրարկելու մասին», ՊՏ C 19, 23.01.1999թ., էջ 1: Գործողությունների ծրագրի պարբերություն 41«բ»–ով նախատեսվում է՝ «ուսումնասիրել վեճերի ոչ դատական լուծման մոդելներ մշակելու հնարավորությունը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով անդրազգային ընտանեկան վեճերին: Այս համատեքստում, պետք է դիտարկել միջնորդությունը՝ որպես ընտանեկան վեճերի լուծման միջոց օգտագործելու հնարավորությունը»: Եվրոպական խորհուրդների եզրակացություններին կարելի է ծանոթանալ հետևյալ էլեկտրոնային հասցեում. http://ue.eu.int/en/Info/eurocouncil/index.htm:

[22] Նախագահության եզրակացությունների (Presidency Conclusions) 30-րդ պարբերություն. http://ue.eu.int/en/Info/eurocouncil/index.htm "Անդամ պետությունները նաև պետք է ստեղծեն այլընտրանքային, արտադատական ընթացակարգեր":

[23] Նախագահության եզրակացությունների 11-րդ պարբերություն:

[24] Նախագահության եզրակացությունների 22-րդ պարբերություն և «eEurope» գործողությունների ծրագիրը.

http://europa.eu.int/information_society/eeurope/action_plan/index_en.htm

կայացած Եվրոպական խորհրդի հանդիպմանը զբաղվածության ոլորտում «կարևորվում է սոցիալական և, հատկապես, անդրազգային սոցիալական բախումների կանխումն ու լուծումը միջնորդության կամավոր մեխանիզմների միջոցով…»:[25]

## 1.4 Արդիական խնդիր

16. ՎԼԱ մեխանիզմները մեծապես ներառված են եղել վերջին տարիներին անցկացված՝ էլեկտրոնային առևտրին վերաբերող օրենսդրական բանավեճերի օրակարգում՝ հատկապես կապված սպառողական վեճերի[26] ոլորտում իրավասության բախումների հետևանքով առաջացած հարցերի՝ մասնավորապես եվրոպական[27] և համաշխարհային[28] մակարդակով որոշ քննարկումների հետ:

17. Այս բանավեճերը համահունչ են եղել «Էլեկտրոնային առևտրի մասին» 2000 թվականի հունիսին ընդունված հրահանգի[29] 17-րդ հոդվածին, որով նախատեսվում է, որ «անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի իրենց օրենսդրությունը չխոչընդոտի

---

25 Նախագահության եզրակացությունների 25-րդ պարբերություն:

26 Վերը նշված՝ Բրյուսելի I կանոնակարգի ընդունմանը նախորդող բանավեճերը

27 Միջազգային մասնավոր իրավունքի վերաբերյալ Հաագայի խորհրդաժողովի շրջանակներում՝ «Իրավասության և օտարերկրյա վճիռների ճանաչման մասին» միջազգային կոնվենցիայի նախագծի շուրջ բանակցությունների համատեքստում ծավալված բանավեճերը http://www.hcch.net/f/workprog/index.html

28 Էլեկտրոնային առևտրի հետ կապված հարցերից բացի, ՎԼԱ մեխանիզմների դերն ուղղակիորեն և անուղղակիորեն ընդգծվել է Համայնքի մի շարք փաստաթղթերում: Հանձնաժողովը զգալի տեղ է հատկացնում դրանց Խորհրդի 85/374/ԵՏՀ հրահանգի (արտադրանքի հետ կապված պատասխանատվության մասին հրահանգ) կիրարկման մասին իր երկրորդ զեկույցում, COM(2000) 893 final: ՎԼԱ մեխանիզմների մասին ուղղակիորեն նշվում է «Վարկերի միջսահմանային փոխանցումների մասին» 97/5/ԵՀ հրահանգի (ՊՏ L 43, 14.02.1997թ., էջ 25) 10-րդ հոդվածում, «Հեռակա պայմանագրերի կապակցությամբ սպառողների պաշտպանության մասին» 97/7/ԵՀ հրահանգի (ՊՏ L 144, 14.06.1997թ., էջ 19) 11-րդ հոդվածում, «Սպառողական ֆինանսական ծառայությունների հեռակա շուկայահանման մասին հրահանգ ընդունելու վերաբերյալ» առաջարկի (COM(1998) 468 final) 12-րդ հոդվածում և «Ապահովագրության միջնորդության մասին հրահանգ ընդունելու մասին» առաջարկի (COM(2000) 511 final) 9-րդ հոդվածում: Ինչ վերաբերում է ձեռնարկությունների միջև վեճերին, տե՛ս նաև 2001թ. սեպտեմբերի 17-ի 38/2001 «Ընդհանուր դիրքորոշման» (ԵՀ) 18-րդ և 19-րդ հոդվածները, որն ընդունվել է Խորհրդի կողմից՝ «Եվրոպական համայնքի ստեղծման մասին» համաձայնագրի 251-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգի համաձայն՝ նպատակ ունենալով էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի և ծառայությունների կարգավորման ընդհանուր դաշտի մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի հրահանգի (շրջանակային հրահանգ) ընդունումը (ՊՏ C337, 30.11.2001թ., էջ 34):

29 «Ներքին շուկայում տեղեկատվական հասարակության ծառայությունների, հատկապես էլեկտրոնային մեկնաբանությունների հետ կապված որոշ դատական գործընթացների մասին» 2000թ. հունիսի 8-ի 2000/31/ԵՀ հրահանգը (ՊՐ L 178, 17.07.2000թ., էջ 1): Բացի այդ, 17-րդ հոդվածը ՎԼԱ մարմիններին կոչ է անում որոշակի հետադարձ կապ ապահովել Հանձնաժողովի հետ: Ուստի, նրանց դերը չի սահմանափակվում կիրարկմամբ, և նրանք համապատասխան դեպքերում օգնում են պետական մարմիններին վերջիններիս իրավական քաղաքականության մշակման գործում:

վեճերի լուծման համար ներպետական իրավունքով նախատեսված արտադատական մեխանիզմների, այդ թվում և համապատասխան էլեկտրոնային միջոցների օգտագործմանը»: 17-րդ հոդվածի դրույթներով անդամ պետություններին նաև առաջարկվել է խրախուսել «արտադատական կարգավորման համար պատասխանատու մարմիններին, որպեսզի վերջիններս գործեն այնպես, որ համարժեք ընթացակարգային երաշխիքներ ընձեռեն շահագրգիռ կողմերին»:

18. Բրյուսելի I կանոնակարգի նախագծի մասին 2000 թվականի սեպտեմբերին ընդունված եզրակացության մեջ Եվրոպական պառլամենտն առաջարկեց որոշակի պայմաններում զարգացնել ՎԼԱ մեխանիզմները և սպառողների համար պարտադիր դարձնել այն դրույթները, որոնց համաձայն սպառողը և տնտեսվարող սուբյեկտը, իրենց միջև կնքվող պայմանագրով, համաձայնում են ցանկացած վեճ լուծել վեճերի լուծման արտադատական համակարգով, որը հաստատված է Հանձնաժողովի հաստատած ծրագրի պայմաններին համապատասխան: Պառլամենտը նաև առաջարկեց վեճերի լուծման նշված այլընտրանքային մեխանիզմների շրջանակում ձեռք բերված համաձայնությունները դարձնել կատարման ենթակա:[30]

19. Խորհրդի կողմից 2000 թվականի դեկտեմբերին ընդունված Բրյուսելի I կանոնակարգում ներառված չեն Պառլամենտի առաջարկած՝ վերը նշված փոփոխությունները: Այնուամենայնիվ, Կոնվենցիայի ընդունման ժամանակ Խորհուրդը և Հանձնաժողովն ընդգծեցին ՎԼԱ մեխանիզմների կարևոր դերը՝ հատկապես էլեկտրոնային առևտրի բնագավառում:[31]

## 1.5 Միջազգային տարածաչափ

20. Համայնքում կատարվող աշխատանքն ունի միջազգային տարածաչափ, որտեղ ՎԼԱ մեխանիզմների պոտենցիալ սուբյեկտներ դիտարկվում են ոչ միայն Եվրոպական միության անդամ պետությունների ֆիզիկական կամ իրավաբանական անձինք: ՎԼԱ մեխանիզմները նաև ընդգրկված են մի շարք միջկառավարական կազմակերպությունների օրակարգում.

- Եվրոպայի խորհուրդը 1998 թվականին ընդունեց առաջարկություն ընտանեկան գործերով միջնորդության մասին,[32] և ներկայումս մշակում է քաղաքացիական գործերով միջնորդության մասին առաջարկության նախագիծ:[33] Հանձնաժողովը մեծ ուշադրությամբ է հետևում այդ ծրագրերին, որոնց մասնակցում են անդամ պետությունները և Եվրոպական միությանն անդամակցելու համար դիմած

---

30 2001թ. մայիսի 17-ի ՊՏ C 146, էջ 94: Տե՛ս նաև 2000թ. հոկտեմբերի 26-ին ներկայացված փոփոխված առաջարկում այս հարցերի վերաբերյալ Հանձնաժողովի արձագանքը, COM(2000)689 final:

31 Խորհրդի և Հանձնաժողովի համատեղ հայտարարությունը կանոնակարգի 15-րդ և 73-րդ հոդվածների վերաբերյալ, որը զետեղված է 2000թ. դեկտեմբերի 22-ի՝ Խորհրդի նիստի արձանագրության մեջ, որտեղ կանոնակարգ է ընդունվել: Հայտարարությանը կարելի է ծանոթանալ հետևյալ էլեկտրոնային հասցեով. http://europe.eu.int/comm/justice_home/unit/civil_en.htm.

32 Առաջարկություն (Recommendation) n° R(98)1 http://cm.coe.int/ta/rec/1998/f98r1.htm

33 Արդարադատության արդյունավետության մասին Փորձագետների կոմիտեի աշխատանքը. http://www.legal.coe.int/civilandcommercial

պետությունները: Սույն Կանաչ փաստաթղթում լիովին հաշվի են առնվել Եվրոպայի խորհրդի վերը նշված նախաձեռնությունները:

- Միջազգային առևտրի իրավունքի ՄԱԿ-ի հանձնաժողովը (United Nations Commission on International Trade Law) իր հերթին մշակում է օրինակելի օրենսդրական դրույթներ առևտրային հաշտեցման վերաբերյալ :[34]

- ՎԼԱ մեխանիզմները (էլեկտրոնային առևտրին առնչվող) ուղղակիորեն կամ անուղղակիորեն նշված են նաև Եվրոպայում համագործակցության և զարգացման կազմակերպության աշխատանքում,[35] ինչպես նաև Միջազգային մասնավոր իրավունքի Հաագայի խորհրդաժողովի շրջանակներում՝ իրավասության և օտարերկրյա վճիռների ճանաչման մասին միջազգային կոնվենցիայի նախագծի շուրջ ծավալված բանակցությունների համատեքստում:[36]

21. Էլեկտրոնային առևտրի ոլորտում ՎԼԱ մեխանիզմների վերաբերյալ առաջարկություններ են ընդունվել մի շարք միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են Էլեկտրոնային առևտրի շուրջ գլոբալ բիզնես–երկխոսությունը (GBD)[37], Անդրատլանտյան բիզնես–երկխոսությունը (TABD)[38], Անդրատլանտյան սպառողական երկխոսությունը (TACD[39]), որոնց աշխատանքին սերտորեն հետևում է Հանձնաժողովը,

22. ՎԼԱ մեխանիզմների (քաղաքացիական և առևտրային իրավունքի ոլորտում) հետ կապված խոշոր ծրագրեր են իրականացվում մի շարք երրորդ պետություններում.

- Եվրոպական միությանն անդամակցելու համար դիմող պետությունները, ինչպես և անդամ պետությունները կարևորում են արդարադատության մատչելիությունը բարելավելու համար իրենց ծրագրերի շրջանակում ՎԼԱ մեխանիզմների զարգացումը, ինչի ապացույցն է նրանց ակտիվ մասնակցությունը Եվրոպայի խորհրդի վերը նշված աշխատանքին:

- ԱՄՆ–ն ունի տարաբնույթ ՎԼԱ մեխանիզմների երկարատև և հարուստ փորձ, որոնց զարգացումը հնարավոր է դարձել շնորհիվ դատական համակարգի օժանդակության: Միացյալ նահանգների մեծ մասը ընդունել է տարբեր ոլորտներում «Միջնորդության մասին» ակտեր: Նահանգների ընդունած ակտերի մեծ թիվը Նահանգային միասնական օրենքների հանձնակատարների ազգային

---

34 Արբիտրաժի հարցերով աշխատանքային խմբի աշխատանքը. http://www.uncitral.org/fr-index.htm

35 Էլեկտրոնային առևտրի համատեքստում սպառողների պաշտպանությունը կարգավորող ուղեցույցների վերաբերյալ Խորհրդի առաջարկությունը. http://www.oecd.org

36 http://www.hcch.net/f/workprog/index.html

37 http://www.tabd.com

38 http://www.gbde.org

39 http://www.tacd.org

խորհրդաժողովին (National Conference of Commissioners on Uniform State Laws) դրդել է «Միջնորդության մասին» միասնական օրենքի նախագիծ մշակել:[40]

- Կանադայում աշխատանքը մեկնարկել է 2000 թվականի օգոստոսին՝ Միասնական իրավունքի խորհրդաժողովի (Uniform Law Conference) շրջանակներում՝ միջնորդության մասին միասնական օրենք[41] մշակելու անհրաժեշտությունը գնահատելու նպատակով:

- Ճապոնիայում ՎԼԱ մեխանիզմների վերաբերյալ ընդհանուր օրենսդրական աշխատանք իրականացնելու մասին առաջարկություն է ընդունվել վերջերս՝ 2001 թվականի հունիսին Արդարադատության համակարգի բարեփոխումների խորհրդի (Justice System Reform Council)[42] կողմից:

**1.6 Առանցքային մանդատ**

23. ՎԼԱ մեխանիզմների վերաբերյալ սույն ուսումնասիրության մեջ ընդգծվում է անդամ պետությունների և Եվրոպական միության նախաձեռնած տարբեր ծրագրերի մանրամասն ցուցակագրման և ՎԼԱ մեխանիզմների որակին առնչվող իրավական հարցերի շուրջ խորհելու անհրաժեշտությունը: Ուստի, տասնհինգ անդամ պետությունների արդարադատության նախարարները որոշել են Եվրոպական համայնքի մակարդակով սկսել աշխատանքը քաղաքացիական և առևտրային իրավունքի նորմերով կարգավորվող ՎԼԱ մեխանիզմների վրա: 2000 թվականի մայիսին նրանք Հանձնաժողովին առաջարկեցին տեղեկություններ հավաքել անդամ պետություններում քաղաքացիական և առևտրային իրավունքի նորմերով կարգավորվող միջսահմանային վեճերի լուծման այլընտրանքային մեթոդների հետ կապված տիրող իրավիճակի մասին: Այս տեղեկությունների հիման վրա Հանձնաժողովին առաջարկվեց մշակել և ներկայացնել Կանաչ փաստաթուղթ՝ ամփոփելու ներկա իրավիճակը և նախաձեռնելու լայն խորհրդակցություն՝ գործնական միջոցառումների իրականացման համար հիմք հարթելու նպատակով :[43]

## 2. ԱՐԴԵՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ՕԳՈՒՏ ՆԵՐ ՔԱՂԵԼԸ

24. Խորհուրդը Հանձնաժողովին առաջարկեց ցուցակագրել անդամ պետություններում և Եվրոպական միությունում առկա ՎԼԱ մեխանիզմները: Արդյունավետության համար ՎԼԱ մեխանիզմների ցանկացած վերլուծություն պետք է հիմնված լինի արդեն իրականացված աշխատանքի վրա: Հանձնաժողովը արդեն կատարված աշխատանքի մասին տեղեկություններ հավաքեց անդամ պետություններին ուղարկված

---

40 http://www.nccusl.org Միասնական ակտի այս նախագիծը ավարտին է հասցվել 2001թ. օգոստոսի 16-ին:

41 http://www.chlc.ca/fr

42 http://www.kantei.go.jp/foreign/judiciary/2001/0612report.html

43 Արդարադատության և ներքին գործերի խորհրդի 2000թ. մայիսի 29-ի եզրակացությունները, տե՛ս http://ue.eu.int/newsroom

հարցաշարի[44] պատասխանների և ՎԼԱ մեխանիզմների վերաբերյալ ուսումնասիրությունների[45] հիման վրա:

## 2.1 Անդամ պետություններում

25. Անդամ պետություններում առկա չէ ՎԼԱ մեխանիզմների մանրամասն կարգավորման համակարգ:[46] Այնուամենայնիվ, այս կապակցությամբ մի շարք ընդհանուր ուսումնասիրություններ են կատարվել Դանիայում,[47] Իտալիայում,[48] Ավստրիայում[49] և Պորտուգալիայում[50]: Այս աշխատանքի արդյունքում հնարավոր կլինի բնորոշել ՎԼԱ մեխանիզմների կարգավիճակը և քաղաքացիական դատավարության իրավունքում ներդնել ՎԼԱ մեխանիզմների դիմելու հնարավորությունը:

---

44 Քաղաքացիական և առևտրային իրավունքի նորմերով կարգավորվող վեճերի լուծման այլընտրանքային մեթոդների մասին հարցաշար, որը կազմվել է Եվրոպական միության խորհրդի պորտուգալական նախագահության կողմից 2000թ. հունիսին:

45 Ուսումնասիրությունն անցկացվել է առևտրային ոլորտում ՎԼԱ մեխանիզմներով զբաղվող մասնագիտական ընկերակցությունների կողմից, որոնք այդ աշխատանքի համար եվրոպական ֆինանսական օժանդակություն են ստացել Գրոցիուս (Grotius) ծրագրի շրջանակներում: Ծրագրի (MARC 2000) նկարագրությանը կարելի է ծանոթանալ GR/2000/136 հերթական համարի ներքո, հետևյալ հասցեով. http://europa.eu.int/comm/justice_home/pdf/grotius2000.pdf.

Գրոցիուս ծրագիրը ստեղծվել է իրավունքի պրակտիկ մասնագետների համար նախատեսված խթանների և փոխանակումների ծրագիր իրականացնելու մասին Խորհրդի 1996 թ. հոկտեմբերի 28-ի համատեղ գործողության վերաբերյալ փաստաթղթով (Council Joint Action), ՊՏ L 287, 8.11.1996թ., էջ 3: Այս ծրագիրը, որի ժամկետն ավարտվեց 2000 թվականին և նորացվեց 2001-ին (Խորհրդի 2001թ. փետրվարի 12-ի կանոնակարգ, ՊՏ L 43, 14.02.2001թ., էջ 1) պետք է վերամշակվի 2002-2006 թվականների համար (քաղաքացիական գործերով եվրոպական դատական տարածքի ձևավորմանը նպաստելու ուղղությամբ Համայնքի միջոցառումների ընդհանուր շրջանակ ստեղծելու մասին կանոնակարգ ընդունելու վերաբերյալ առաջարկ, ՊՏ C 213 E, 31.07.2001թ., էջ 271):

46 Տարածաշրջանային որոշակի օրենսդրություն ընդունվել է, օրինակ, Հյուսիսային Ռայն-Վեստֆալիայում . http://www.streitschlichtung.nrw.de.

47 Դանիայում Դատավարական իրավունքի մշտական հանձնաժողովն («Retsplejerådet») աշխատանք է տանում Քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ: Առաջին զեկույցը, որ ներկայացվեց 2001 թվականի գարնանը, ներառում է քաղաքացիական գործերով առկա արտադատական ընթացակարգերի նկարագրություն: «Retsplejerådet»-ն այժմ շարունակում է իր աշխատանքը՝ փնտրելով ՎԼԱ մեխանիզմների և դատական վարույթների միջև համակարգումը բարելավելու եղանակներ:

48 Իտալիայի օրինագիծը կազմվել է 2000թ. գարնանը (schema di disegno di legge recante norme per l’accesso alla giustizia civile, per la risoluzione consensuale delle controversie e per l’abbreviazione dei tempi del processo civile):

49 «Միջնորդության մասին» ակտը (Mediationgesetz) ներկայումս քննարկման փուլում է:

50 “Resolução alternativa de litígios” թեմայով Պորտուգալիայի արդարադատության նախարարության հանրային քննարկումների արդյունքում ընդունվեց «Հաշտարար դատավորների և օմբուդսմանի մասին» ակտը (թիվ 78/2001, 2001թ. հուլիսի 13):

26. Որոշ անդամ պետություններ ոլորտային նախաձեռնություններ են իրականացրել ՎԼԱ մեխանիզմները խթանելու ուղղությամբ՝ ստեղծելով ՎԼԱ մեխանիզմների վերաբերյալ խորհրդակցական մարմիններ,[51] ֆինանսավորում տրամադրելով ՎԼԱ կառույցներին,[52] իրականացնելով մասնագիտական վերապատրաստման ծրագրեր[53] և հանրության շրջանում տեղեկություններ տարածելով ՎԼԱ մեխանիզմների վերաբերյալ: Երբեմն նախատեսված աշխատանքը ներառում է ներպետական օրենսդրության փոփոխություններ՝ հաշվի առնելու ՎԼԱ մեխանիզմների առանձնահատկությունները:[54]

### 2.1.1 ՎԼԱ մեխանիզմները դատական վարույթների համատեքստում

27. Ինչ վերաբերում է դատարանի կողմից իրականացվող ՎԼԱ ընթացակարգերին, ապա անդամ պետությունների քաղաքացիական դատավարության օրենսգրքերը նախատեսում են հիմնականում հաշտեցման վարույթով զբաղվող դատավորի կողմից գործի քննությունը,[55] հաշտեցումը վարույթի պարտադիր փուլ դարձնելը[56] կամ դատավորներին անմիջականորեն խրախուսում են ակտիվորեն միջամտել կողմերի միջև համաձայնության կայացմանը:[57] Հետևաբար, դատավորներին վերապահված այդ

---

51 Տե՛ս, օրինակ, 2001թ. հոկտեմբերի 8-ի որոշմամբ Ֆրանսիայում «ընտանեկան միջնորդության ազգային խորհրդակցական խորհրդի» ստեղծումը, որի խնդիրն է «առաջարկել բոլոր այն միջոցառումները, որոնք կարող են օգտակար լինել ընտանեկան միջնորդության կազմակերպումը խրախուսելու և դրա զարգացումը խթանելու հարցում: Այդ առումով, խորհուրդն ուսումնասիրում է ընտանեկան միջնորդության կիրառության շրջանակները, ընտանեկան միջնորդների վերապատրաստումը և էթիկայի կանոնները, միջնորդության պրակտիկայի և ազդեցության գնահատումը, մասնավորապես՝ ընտանեկան կապերի պահպանման անհրաժեշտության առումով: http://www.justice.gouv.fr/presse/com091001.htm

52 Սկանդինավյան պետություններում, օրինակ, Սպառողների բողոքները քննող խորհուրդները ֆինանսավորվում են ուղղակիորեն բյուջեից:

53 Պորտուգալիայում, օրինակ, արդարադատության նախարարությունը 2001թ. հոկտեմբերի 30-ին ներկայացրեց հաշտարար դատավորների և օմբուդսմանների վերապատրաստման մասին արձանագրություն. http://www.mj.gov.pt

54 Գերմանիայում, օրինակ, օրենքը փաստաբաններին իրավաբանական ծառայություններ մատուցելու մենաշնորհ է տալիս: Դատարանը պետք է որոշեր, որ ՎԼԱ մեխանիզմները համարվում են «իրավաբանական ծառայություններ» և փաստաբանների մենաշնորհին են: Պետական մարմինները ներկայումս քննարկում են տեքստերի փոփոխություններ, որը կվերացներ փաստաբանների մենաշնորհը ՎԼԱ մեխանիզմների նկատմամբ:

55 Իտալիայում, օրինակ, «հաշտարար դատավորների» պաշտոնը, որոնց իրավասությունը սահմանվում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 322–րդ հոդվածով: Հունաստանում հաշտարար դատավորների միջամտությունը հաշտեցման գործընթացին կարգավորվում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 209–րդ հոդվածով: Բելգիայում Դատական օրենսգրքի 731–րդ հոդվածով նախատեսվում է առաջին ատյանի դատավորների ընդհանուր իրավասությունը՝ քննելու հաշտեցման մասին դիմումներ:

56 Ֆինլանդիայում, օրինակ, քաղաքացիական բոլոր գործերում դատավորը պետք է նախապես ստանա կողմերի միջև ձեռք բերված համաձայնություն:

57 Գերմանիայում, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ZPO) 279–րդ հոդվածի համաձայն, դատարանը պարտավոր է դատավարության ողջ ընթացքում գերադասելի համարել հաշտության համաձայնության ձեռքբերումը: Ֆրանսիայում Քաղաքացիական

կոնկրետ լիազորությունները, որոնք ոչ միշտ է, որ նրանց գործառույթների մեջ են, պետք է ուղեկցվեն վերապատրաստման համապատասխան ծրագրերով:

28. Դատարանի վճռով երրորդ անձին վերապահված ՎԼԱ մեխանիզմները անդամ պետությունների մեծ մասում կարգավորվում են ընդհանուր բնույթի իրավական ակտերով, ինչպես նաև իրավական ակտերի մի շարք նախագծերի առարկան են: Դրանց շրջանակը լայն է՝ ՎԼԱ մեխանիզմների դիմելու հնարավորությունից (օրինակ, Բելգիայում[58] և Ֆրանսիայում[59]) մինչև ՎԼԱ ընթացակարգերի խրախուսումը (Իսպանիայում,[60] Իտալիայում,[61] Շվեդիայում,[62] և՛ Անգլիայում, և՛ Ուելսում[63]) կամ նույնիսկ օրենքի կամ դատավորի որոշման համաձայն նախապես ՎԼԱ մեխանիզմների դիմելու պարտավորվածությունը (օրինակ՝ Գերմանիայում,[64] Բելգիայում[65] և Հունաստանում[66]):

---

դատավարության նոր օրենսգրքի 21–րդ հոդվածով նախատեսվում է, որ կողմերին հաշտեցնելը դատավորի պարտականությունն է:

58 Դատական օրենսգրքի 665-րդ հոդվածը, որը ներդրվել է ընտանեկան վեճերով միջնորդության մասին 2001թ. հունվարի 21-ի օրենքով, դատավորին թույլ է տալիս կողմերի համատեղ դիմումի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ, սակայն կողմերի համաձայնությամբ, նշանակել միջնորդ:

59 Տե՛ս Քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի հոդվածներ 131-1-ից 131-15–ը՝ նվիրված դատական միջնորդությանը:

60 2001թ. հունվարի 9-ին ուժի մեջ մտած թիվ 1/2000 ակտի 414–րդ և 415–րդ հոդվածներով նախատեսվում է, որ դատավորը «սովորական» վարույթի սկզբում, կողմերի հայցերն ու պահանջները ներկայացնելուց հետո, պարտավոր է միջամտել՝ կողմերին առաջարկելով հաշտության համաձայնություն կամ գործարք կնքել:

61 Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183–րդ, 185–րդ և 350–րդ հոդվածներով նախատեսվում է, որ դատավորը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ գործնականում գնահատելու կողմերի փաստացի հաշտեցումն ամրագրող փաստաթղթի հիման վրա առկա վճիռը չեղյալ ճանաչելու համար անհրաժեշտ բոլոր պայմանների առկայությունը:

62 Դատավարության օրենսգրքի 42-րդ գլխի 17-րդ բաժնի համաձայն՝ դատարանը պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները, որոնք թույլ կտան հաշտությամբ լուծել վեճը:

63 1999թ. ապրիլի 26-ին ուժի մեջ մտած Անգլիայի և Ուելսի Քաղաքացիական դատավարության կանոնների 26.4–րդ և 44.5–րդ կանոնների համաձայն՝ դատարանն իրավասու է կասեցնել գործի քննությունը՝ կողմերին թույլ տալով դիմել միջնորդության: Միջնորդությունից հրաժարվելու դեպքում դատարանները կարող են կողմերի նկատմամբ ֆինանսական տուգանքներ կիրառել:

64 1999 թ. դեկտեմբերի 15-ի դաշնային ակտի համաձայն՝ Գերմանիայի երեք «հողեր» սահմանեցին, որ «Schlichtung» անունով հայտնի ՎԼԱ ընթացակարգը պարտադիր է՝ ամրագրելով, որ դատական հայցն ընդունելի չէ, եթե կողմերը նախապես չեն փորձել «Schlichtung» ընթացակարգով լուծել վեճը: Այժմ մշակվում է դաշնային նոր դատավարական օրենսգիրք, որը կողմերին թույլ կտա պահանջել միջնորդության համար նախատեսված դատական նիստի օրվա նշանակում, իսկ դատավորին կպարտավորեցնի վարույթը սկսելուց առաջ նախապես փորձել միջնորդությունը:

65 Դատական օրենսգրքի համաձայն՝ արտադատական ընթացակարգերի դիմելը պարտադիր է, օրինակ, աշխատանքային պայմանագրերի և գյուղատնտեսական վարձակալության հետ կապված վեճերի դեպքում: Ներկայումս քննարկվում է օրինագիծ, որով նախատեսվում են

29. ՎԼԱ մեխանիզմների ավելի լայնատարած կիրառությունը խրախուսելու նպատակով գործնական փորձեր են անցկացվել թե դատարանների նախաձեռնությամբ,[67] թե իրավասու նախարարների նախաձեռնությամբ՝ փորձնական ծրագրերի տեսքով:[68]

30. Դատարանների կողմից նշանակվող երրորդ անձը կարող է լինել քաղաքացիական ծառայող,[69] դատական մարմինների կողմից որոշակի չափանիշների հիման վրա նշանակված քաղաքացի, ում անունը ներառված է ցանկում,[70] կամ ում յուրաքանչյուր դեպքի համար նշանակում են առանձին:[71]

### 2.1.2 ՎԼԱ պայմանագրային մեխանիզմները

31. ՎԼԱ պայմանագրային մեխանիզմների վերաբերյալ որոշակի ընդհանուր իրավական կարգավորում անդամ պետություններում չկա: Կիրառելի են միայն պայմանագրային իրավունքի ընդհանուր նորմերը կամ ՎԼԱ մեխանիզմների արդյունքում կնքվող՝ գործարքային համաձայնության վերաբերյալ հատուկ նորմերը: ՎԼԱ մեխանիզմները հիմնված են պայմանագրային իրավունքի, քաղաքացիական դատավարության իրավունքի և միջազգային մասնավոր իրավունքի ընդհանուր սկզբունքների վրա: Պայմանագրային պրակտիկայի և ՎԼԱ մեխանիզմների շրջանակներում ծառայություններ տրամադրող երրորդ անձանց մասնագիտական էթիկայի կանոնների զարգացման մակարդակը տարբեր անդամ պետություններում տարբեր է:

32. Մի շարք անդամ պետություններում ոլորտային օրենսդրություն է ընդունվել, որի նպատակն է ստեղծել ՎԼԱ մեխանիզմների համար պատասխանատու

---

ընդհանուր բարեփոխումներ Դատական օրենսգրքի շրջանակում՝ միաժամանակ ներդնելով դատավորի կողմից միջնորդական ընթացակարգ պահանջելու հնարավորությունը:

66 Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածով նախատեսված է, որ առաջին ատյանի դատարանի իրավասությանը ենթակա վեճերը չեն կարող լսվել, եթե նախապես հաշտեցման փորձ չի արվել:

67 Փորձ է կատարվում Ֆրանսիայի աշխատանքային տրիբունալներից մեկում http://www.mediationsociale.com

68 Փորձնական ծրագիր է իրականացվում Նիդեռլանդներում. http://www.minjust.nl

69 Հունաստանում հաշտարարը, որը գործում է թիվ 1876/1990 ակտի 13-16–րդ հոդվածների համաձայն, Աշխատանքի նախարարության պաշտոնյա է:

70 Ֆրանսիայում իրավական հաշտարարը պետք է բավարարի որոշակի պայմաններ. բարոյականություն (նա չպետք է զրկված լինի իր քաղաքացիական և քաղաքական իրավունքներից), որակավորում (նա պետք է ունենա իրավական հարցերի հետ կապված առնվազն երեք տարվա փորձ) և անկախություն (նա չի կարող ընտրովի կամ դատական պաշտոն զբաղեցնել):

71 Ֆրանսիայում միջնորդը պետք է բավարարի որոշակի պայմաններ. բարի համբավ (չի կարող ունենալ քրեական, կարգապահական կամ վարչական դատվածություն), որակավորում, փորձ և անկախություն:

ծառայություններ, օրինակ՝ Դանիայում,[72] Իռլանդիայում,[73] Ֆինլանդիայում[74] և Շվեդիայում:[75]

33. Ըստ երևույթին, հանրային մարմինները տեղերում հետևում են բոլոր ընթացակարգերի համար ընդհանուր որոշ սկզբունքների:[76] Վեճի կողմերն ազատ են ՎԼԱ մեխանիզմների դիմելու կամ չդիմելու հարցում: Նրանք ինքնուրույն են որոշում վարույթ կազմակերպել թե ոչ՝ հաշվի առնելով վարույթն իրականացնող երրորդ անձի անկողմնակալությունը և արդարացիությունը: Նշված երրորդ անձը պետք է պահպանի գաղտնիության սկզբունքը: Անդամ պետությունները, մասնավորապես, կարևորում են նշված ընթացակարգերի շրջանակում որոշակի դատավարական նվազագույն երաշխիքների ապահովումը:

## 2.2 Եվրոպական միության մակարդակով

34. ՎԼԱ մեխանիզմների կապակցությամբ Եվրոպական միության մակարդակով արդեն ձեռնարկված կարևորագույն աշխատանքը, որը կարելի է օգտագործել որպես հիմք, առնչվում է սպառողների շահերի պաշտպանության իրավունքին, ընտանեկան իրավունքին և աշխատանքային իրավունքին:

### 2.2.1 Սպառողների շահերի պաշտպանության իրավունքի ոլորտում նախաձեռնություններից օգուտներ քաղելը

35. Վերջին տարիներին սպառողական հարցերով վեճերի բնագավառում խոշոր ծրագրեր են իրականացվել (ներպետական, միջսահմանային, ինտերնետի հետ կապված կամ այլ) սպառողների համար արդարադատությունն ավելի մատչելի դարձնելուն ուղղված ծրագրի շրջանակներում:[77] Արդեն իրականացված աշխատանքն այստեղ հակիրճ ներկայացված է երկու պատճառով՝ ամփոփել այս ոլորտում մինչ այժմ իրականացված բոլոր ծրագրերը և մեծ բանավեճ ծավալել ՎԼԱ մեխանիզմների առավել լայն

---

72 Arbejdsmarkedets Ankenarven (աշխատաշուկայի միջնորդ հանձնաժողով), Huslejenaevnene (վարձակալության հանձնաժողով), Forbrugerklagenaevn (սպառողների հարցերով միջնորդ հանձնաժողով):

73 Աշխատանքային հարաբերությունների հանձնաժողովի հաշտեցման ծառայություն (Conciliation Service of the Labour Relations Commission):

74 Kuluttajavalituslautakunta (Սպառողական հարցերով վեճերի գրասենյակ):

75 Սպառողական հայցերի ազգային գրասենյակ, ճանապարհային երթևեկության հետ կապված վնասների հարցերի գրասենյակ:

76 Հարցաշարի այս կետի վերաբերյալ անդամ պետությունների պատասխանները առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում:

77 Տե՛ս մասնավորապես Սպառողների համար արդարադատության մատչելիության և միասնական շուկայում սպառողական վեճերի կարգավորման մասին Հանձնաժողովի 1993թ. նոյեմբերի 16-ի Կանաչ փաստաթուղթը (COM(93)576), Սպառողների համար արդարադատության մատչելիության և միասնական շուկայում սպառողական վեճերի կարգավորման նպատակով գործողությունների ծրագիր ընդունելու մասին Հանձնաժողովի 1996թ. փետրվարի 14-ի հաղորդագրությունը (COM(96)13), Սպառողական վեճերի արտադատական լուծման մասին Հանձնաժողովի 1998թ. մարտի 30-ի հաղորդագրությունը (COM(1998)198) և Վեճերի լուծման այլ համակարգերը սպառողների համար ավելի մատչելի դարձնելու մասին Հանձնաժողովի 2001թ. ապրիլի 4-ի հաղորդագրությունը (COM(2001)161):

քննարկման շրջանակներում, որպեսզի հնարավոր լինի ավելի լիարժեք պատկերացում կազմել Եվրոպական միությունում տիրող իրավիճակի մասին: Սա հնարավորություն է տալիս բանավեճը ծավալել սպառողական իրավունքի շարունակական վերանայման ավելի ընդհանուր համատեքստում:

36. Սպառողների համար արդարադատության մատչելիությունը բարձրացնելու ծրագրի շրջանակներում Պառլամենտը և Խորհուրդը Հանձնաժողովի առաջարկով ընդունեցին «Սպառողական շահերի պաշտպանության համար իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները (անգործությունը) կանխելու մասին» 1998 թվականի մայիսի 19-ի 98/27/ԵՀ հրահանգը:[78] Այս հրահանգի համաձայն՝ անդամ պետությունները պարտավոր են հնարավորություն ընձեռել անկախ պետական մարմիններին և սպառողական կազմակերպություններին, որպեսզի նրանք առնտրային որոշակի գործունեություն իրականացնողների կողմից սպառողների իրավունքները խախտող կամ նման խախտման վտանգ ստեղծող գործողությունները (անգործությունը) կանխելու վերաբերյալ հայցեր ներկայացնեն: Սպառողների իրավունքների պաշտպանության ուղղությամբ լրացուցիչ միջոցներ են ձեռնարկվել որոշ ոլորտներում, ինչպիսիք են տրանսպորտը[79] և էներգետիկան:[80]

37. Հանձնաժողովն ընդունել է երկու առաջարկություն, որոնցով սահմանվում են սպառողական վեճերի լուծման արտադատական ընթացակարգերի վրա տարածվող սկզբունքները: Այդ առաջարկությունների հետ մեկտեղ, որոնք բոլորն ուղեկցվել են Հանձնաժողովի հաղորդագրությամբ, հրապարակվել է սպառողների համար եվրոպական հայցի ձևը:[81]

- Առաջին առաջարկությունը, որն ընդունվել է 1998 թվականի մարտի 30-ին,[82] վերաբերում է այն ընթացակարգերին, որոնք, անկախ անվանումից, հանգեցնում են վեճի լուծման երրորդ անձի ակտիվ միջամտության շնորհիվ, որն ընդունել է վեճի լուծմանն առնչվող ֆորմալ դիրքորոշում: Այս առաջին առաջարկությունը, որով նախատեսվում են ՎԼԱ մեխանիզմների ստեղծման և դրանց գործելու յոթ նվազագույն սկզբունքները, չի վերաբերում այն ընթացակարգերին, որոնք հաճախ անվանվում են «միջնորդության» ընթացակարգեր: Անդամ պետություններին առաջարկվել է կազմել սպառողական վեճերի արտադատական լուծմամբ զբաղվող

---

78 ՊՏ L 166, 11.06.1998թ., էջ 51:

79 Հանձնաժողովի կողմից ՎԼԱ մեխանիզմներին տրվող կարևորությունն ընդգծված է “Եվրոպայի տրանսպորտի քաղաքականությունը 2010-ի համար. եկել է որոշելու պահը” ("European transport policy for 2010: time to decide") խորագրով Հանձնաժողովի կողմից 2001թ. սեպտեմբերի 12-ին հաստատված Սպիտակ փաստաթղթում (White Paper) (COM(2001) 370 final), Եվրոպական միությունում օդային ուղևորների պաշտպանության մասին 2000թ. հունիսի 21-ի հաղորդագրությունում (COM(2000) 365 final) և “Դեպի եվրոպական համակցված երկաթուղային տարածք” ("Towards an integrated European railway area") խորագրով Հանձնաժողովի կողմից 2002թ. հունվարի 23-ին ընդունված հաղորդագրությունում (COM(2002) 18):

80 Էլեկտրաէներգիայի և բնական գազի ներքին շուկայի ընդհանուր կանոնների վերաբերյալ 96/92/ԵՀ և 98/30/ԵՀ հրահանգներում փոփոխություն կատարելու մասին Պառլամենտի և Խորհրդի հրահանգ ընդունելու վերաբերյալ առաջարկ (COM)2001 125):

81 http://europa.eu.int/comm/consumers/policy/developments/acce_just/index_en.html

82 ՊՏ L 115,17.04.1998թ., էջ 31:

մարմինների ցուցակ, ովքեր նրանց կարծիքով համապատասխանում են Հանձնաժողովի առաջարկությանը: Ազգային այս ցուցակները փոխանցվել են Հանձնաժողովին, որն իր հերթին պատասխանատու է դրանց հրապարակման համար:[83]

- Երկրորդ առաջարկությունը (2001թ. ապրիլի 4-ի[84]) վերաբերում է այն ընթացակարգերին, որոնք սահմանափակվում են կողմերի միջև հանդիպման միջոցով փոխադարձ համաձայնությամբ լուծում գտնելու հասարակ փորձով: Այնուամենայնիվ, ոչ պաշտոնապես լուծում առաջարկելու նպատակով հնարավոր է ներգրավել երրորդ անձի:

38. Հանձնաժողովը նաև ստեղծել է ներպետական մարմինների երկու եվրոպական ցանց, որոնց նպատակն է միջսահմանային վեճերի լուծման արտադատական ընթացակարգերը սպառողների համար ավելի մատչելի դարձնել այն դեպքերում, երբ մասնագետը գտնվում է այն անդամ պետությունում, որն այլ է բնակության վայրի անդամ պետությունից: Երկու ցանցերը հետապնդում են նույն նպատակը, սակայն գործում են տարբեր եղանակներով:

- Եվրոպական արտադատական ցանցը (“European Extra-Judicial Network” կամ “EEJ-Net”)[85] սպառողների աջակցության և տեղեկատվության կառույց է, որը բաղկացած է յուրաքանչյուր անդամ պետությունում, ինչպես նաև Իսլանդիայում և Նորվեգիայում գտնվող ազգային համակարգողներից (national contact points) (կամ «Քլիրինգային կենտրոններից»): Ազգային համակարգողներից յուրաքանչյուրը տեղեկատվություն է տրամադրում այն 400 մարմիններին, որոնք անդամ պետությունների կարծիքով համապատասխանում են սպառողական վեճերի արտադատական լուծման համար պատասխանատու մարմինների վրա տարածվող սկզբունքներին վերաբերող Հանձնաժողովի երկու առաջարկություններում նշված պահանջներին: Այս ցանցի գործունեությունը պաշտոնապես մեկնարկել է 2001 թվականի հոկտեմբերի 16-ին: Մեկ տարի տևող փորձաշրջանից հետո Հանձնաժողովը 2002 թվականի աշնանը կպատրաստի ամբողջական զեկույց, որտեղ կնշվի դրա ընթացիկ վիճակը և հաջողությամբ ավարտին հասցնելու հետ կապված խնդիրները:

- «FIN-NET»–ը (“FINancial Services complaints NETwork” կամ «Ֆինանսական ծառայությունների հետ կապված բողոքների ցանց»)[86] ՎԼՄ մեխանիզմներով զբաղվող իրավասու ներպետական մարմինների ցանց է, որոնք համապատասխանում են Հանձնաժողովի առաջին առաջարկությունում նշված պահանջներին: 2002 թվականի փետրվարի 22-ի դրությամբ այդ մարմինների թիվը

---

83 Ծանուցված մարմինների ցանկին կարելի է ծանոթանալ հետևյալ հասցեով. http://europa.eu.int/comm/consumers/policy/developments/acce_just/acce_just04_fr.html

84 ՊՏ L 109, 19.04.2001թ., էջ 56:

85 http://europa.eu.int/comm/consumers/policy/developments/acce_just/index_en.html

“EEJ-Net”-ի վերաբերյալ տես, մասնավորապես, Հանձնաժողովի SEC(2000) 405 աշխատանքային փաստաթուղթը, Խորհրդի 2000թ. մայիսի 25-ի բանաձևը, ՊՏ C 155, 6.06.2000թ., էջ 1, և Եվրոպական պառլամենտի կողմից սեփական նախաձեռնությամբ 2001 թ. հուլիսի 3-ին ընդունված բանաձևը, որը դեռ չի հրապարակվել:

86 http://europa.eu.int/comm/internal_market/en/finances/consumer/adr.htm

37-ն էր: «FIN-NET»-ը ֆինանսական ծառայությունների (բանկեր, ապահովագրական ընկերություններ, ներդրումային ծառայություններ) հետ կապված խնդիրներ ունեցող սպառողներին հնարավորություն է ընձեռում ուղղակիորեն օգտվել ՎԼԱ մեխանիզմներից: Այս ցանցը Հանձնաժողովի կողմից ներդրվել է 2001 թվականի փետրվարի 1-ին և արդեն ունեցել է բարերար ազդեցություն: «FIN-NET»-ի վերաբերյալ ուղեցույց է հրատարակվելու «Քաղաքացիների և ձեռնարկությունների հետ երկխոսության» (“Dialogue with Citizens and Business”) համատեքստում սպառողներին այդ ցանցի հետ ծանոթացնելու նպատակով, որն իր հերթին նպատակ ունի նրանց ներկայացնել միասնական շուկայում իրենց իրավունքները:

39. Հանձնաժողովի երկու առաջարկությունները զգալի ազդեցություն են ունեցել անդամ պետություններում: Հանձնաժողովը սպառողների հետ կապված նոր միջոցներ չի ձեռնարկի այնքան ժամանակ, քանի դեռ չեն իրականացվել «EEJ-Net»-ի ամբողջական գնահատում և ընդգրկուն քննարկումներ բոլոր անդամ պետությունների, ՎԼԱ մեխանիզմների կիրառման ծառայություններ մատուցողների և այլ շահագրգիռ կողմերի հետ:

40. Սպառողական վեճերի հետ կապված ՎԼԱ մեխանիզմներին առանձնակի ուշադրություն է դարձվում էլեկտրոնային առևտրի ոլորտում, հատկապես «Էլեկտրոնային Եվրոպայի գործողությունների ծրագրում» (“e-Europe Action Plan”):[87] Դա վերաբերում է «ավանդական» այլընտրանքային ուղիներին և «ՎԱԼ»-ին կամ Վեճերի առցանց լուծմանը («ODR»՝ «Online Dispute Resolution»), որը կարող է նաև օգտագործվել էլեկտրոնային առևտրի հետ չառնչվող վեճեր լուծելու համար: ՎԱԼ-ին առնչվող մի շարք խնդիրներ կքննարկվեն Հանձնաժողովի՝ մոտ ապագայում հրապարակվելիք հաղորդագրությունում:

41. Էլեկտրոնային առևտրի ոլորտում սպառողական վեճերի հետ կապված ՎԼԱ մեխանիզմների շուրջ քննարկումները դիտարկվում են էլեկտրոնային առևտրի նկատմամբ սպառողների վստահությունն ամրապնդելու նպատակ հետապնդող առավել ընդհանուր քաղաքականության շրջանակներում: «Էլեկտրոնային Եվրոպա 2002. գործողությունների ծրագրի»[88] շրջանակում Հանձնաժողովն ինտերնետում ստեղծել է սպառողների վստահության թեմայով քննարկումների և տեղեկությունների փոխանակման ֆորում (“e-confidence”):[89] Այս համատեքստում Հանձնաժողովը խրախուսել է շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ մասնագետներին և սպառողներին, որպեսզի նրանք առևտրային ազնիվ գործելակերպի (“commercial good practice”) բարձր մակարդակ ապահովեն:[90] Նշված բոլոր միջոցառումների և դրանց արդյունքների հիման վրա Հանձնաժողովը մոտ ապագայում պետք է ծրագիր նախաձեռնի:

---

87 Տե՛ս սույն Կանաչ փաստաթղթի 15-րդ պարբերությունը:

88 Տե՛ս սույն Կանաչ փաստաթղթի 15-րդ պարբերությունը:

89 http://econfidence.jrc.it

90 2001թ. հոկտեմբերի 22-ին Սպառողների եվրոպական կազմակերպությունը (BEUC) և Եվրոպայի արդյունաբերական և գործատուների համադաշնությունների միությունը (UNICE) ներկայացրին էլեկտրոնային առևտրի մեջ վստահության պիտակների եվրոպական հավատարմագրման համակարգ ստեղծելու մասին առաջարկ http://www.beuc.org, http://www.unice.org

42. Համայնքի մակարդակով զգալի ջանքեր են գործադրվել էլեկտրոնային առևտրի ոլորտում ՎԼԱ մեխանիզմների զարգացումը խթանելու ուղղությամբ: Օրինակ, Համայնքին ֆինանսական օժանդակություն է ցուցաբերվել ՎԼԱ մեխանիզմների առցանց ծրագրերի,[91] առևտրային կայքերի համար որակի վերահսկողության ծրագրերի,[92] բուհական ուսուցման և վերապատրաստման ծրագրերի[93] համար:

43. Էլեկտրոնային առևտրի ոլորտում սպառողական վեճերը լուծելու նպատակով մշակված ՎԼԱ մեթոդները բարձրացնում են մի շարք իրավական հարցեր: Հանձնաժողովն արդեն ընդունել է ընդհանուր ուղենիշներ, որոնք արտացոլում են իր այն մտահոգությունը, որ ՎԼԱ մեխանիզմները պետք է հետևեն միևնույն սկզբունքներին, ինչ հակասությունների լուծման ավանդական ուղիների դեպքում:[94] Սակայն, Հանձնաժողովը դիտարկում է նաև այլ նախաձեռնություններ, որոնցում արտացոլված են առցանց միջավայրին բնորոշ մի շարք առանձնահատկություններ և խոչընդոտներ, հատկապես տեխնիկական առումով:[95] Ավելին, Համայնքն ընդունել է այնպիսի իրավական համակարգ, որը երաշխավորում է վիրտուալ համաձայնագրերի վավերությունը, այսինքն, ոչ միայն պայմանագրային դրույթների, որոնցով սահմանվում է ՎԼԱ մեխանիզմների դիմելու հնարավորությունը, այլ նաև առկա վեճը ՎԼԱ ընթացակարգով լուծելու՝ կողմերի որոշումը արտացոլող պայմանագրերի և ընթացակարգի վերջում կնքված ՎԼԱ մեխանիզմների մասին համաձայնագրերի վավերությունը: Էլեկտրոնային առևտրի մասին վերոհիշյալ հրահանգը փաստացի նախատեսում է, որ անդամ պետությունները պարտավոր են թույլատրել էլեկտրոնային պայմանագրեր:[96] Անդամ պետությունները նաև պարտավոր են

---

[91] Սպառողների հետ կապված վեճերի լուծման էլեկտրոնային պլատֆորմ (ECODIR). http://www.ecodir.org ստանում է ֆինանսական օժանդակություն Համայնքից, որը կառավարվում է Եվրոպական հանձնաժողովի Առողջության և սպառողների պաշտպանության գլխավոր տնօրինության կողմից: «Առցանց վստահություն» (“Online Confidence”) ծրագրին Հանձնաժողովն օժանդակում է «TEN-Telecoms» ծրագրի շրջանակներում (Տեղեկատվական հասարակության գլխավոր տնօրինություն):

[92] «Webtrader»-ը մասնավոր միջազգային ծրագիր է, որի նպատակն է վերահսկել առևտրային կայքերը և որակի պիտակներ շնորհել դրանց: Այս ծրագրին մասնակցում են սպառողական կազմակերպություններ 10 պետություններից, որոնցից ութը անդամ պետություններ են (տես, օրինակ, http://www.budget-net.com/webtradersite/reseau_be.html): Այս ծրագիրը ներառում է վարքագծի կանոնագրքերի մշակում և ՎԼԱ համակարգերի ներդրում: Համայնքը ծրագրին ցուցաբերում է ֆինանսական օժանդակություն, որը կառավարվում է Եվրոպական հանձնաժողովի ձեռնարկությունների գլխավոր տնօրինության կողմից:

[93] Աշխատանքի առաջատարը Առևտրի իրավական հարցերի էլեկտրոնային պլատֆորմն է (ECLIP), որը նոր տեխնոլոգիաների մասին օրենսդրության գծով մասնագիտացող եվրոպական հինգ հետազոտական կենտրոնների կոնսորցիում է, տե՛ս http://www.eclip.org: Եվրոպական համայնքն այս աշխատանքին ցուցաբերում է ֆինանսական օժանդակություն, որը կառավարվում է Հանձնաժողովի տեղեկատվական հասարակության գլխավոր տնօրինության կողմից Տեղեկատվական հասարակության տեխնոլոգիաների (IST) ծրագրով, տե՛ս http://www.cordis.lu/ist/home.html

[94] Տե՛ս երկու առաջարկությունները և վերը նշված երկու հաղորդագրությունները սպառողական վեճերի վերաբերյալ:

[95] Սույն Կանաչ փաստաթղթի 40-րդ պարբերությունում նշված՝ ՎԱԼ խթանման մասին ակնկալվող հաղորդագրությունը:

[96] Հոդված 9«1»:

ապահովել, որպեսզի իրենց իրավական համակարգով թույլատրվի ՎԼԱ մեխանիզմների օգտագործումն էլեկտրոնային միջոցներով:[97]

44. Համայնքի օրենսդրական դրույթները համալրվել են Բրյուսելի I կանոնակարգի ընդունմամբ, որում դատարանի ընտրության վերաբերյալ դրույթները, այդ թվում և սպառողների մասով, որպես այդպիսին չեն ազդում ՎԼԱ մեխանիզմների դիմելու հնարավորության վրա: Այդ կանոնակարգի և ՎԼԱ մեխանիզմների միջև կապը քաղաքական և իրավական բանավեճի առարկա էր Կանոնակարգի ընդունման շուրջ բանակցությունների ընթացքում: 2000 թվականի սեպտեմբերին Եվրոպական պառլամենտն ըստ էության առաջարկել էր, որպեսզի որոշակի պայմանների պահպանմամբ «սպառողական պայմանագրերի մեջ նախատեսվի դրույթ, որով սպառողը և վաճառողը համաձայնում են ցանկացած վեճ ներկայացնել Հանձնաժողովի կողմից հաստատված համակարգի շրջանակներում հավատարմագրված՝ վեճերի արտադատական լուծման որևէ համակարգի»:[98]

45. Իր վերանայված առաջարկում[99] Հանձնաժողովն այս հարցում չհամաձայնեց Պառլամենտի հետ՝ տալով հետևյալ հիմնավորումը. «Պառլամենտն առաջարկում է դրույթ, որով սպառողը և մատակարարը կարող են համաձայնեցնել պայմանագրի դրույթ, որով վեճերը, նախքան դատարան հայց ներկայացնելը, հանձնվում են վեճերի ոչ դատական լուծման որևէ համակարգի: Այդ կապակցությամբ նախատեսվում են մի շարք պայմաններ՝ ներառյալ Հանձնաժողովի կողմից այդ համակարգի նախապես հաստատումը: Հանձնաժողովը կիսում է այդ փոփոխության հիմքում ընկած մտահոգությունը և առաջարկվող Կանոնակարգը որպես օրենսդրական և ոչ օրենսդրական, այդ թվում և վեճերի լուծման արտադատական համակարգերի ստեղծման միջոցառումների փաթեթի բաղադրիչ դիտարկելու Պառլամենտի ցանկությունը: Հանձնաժողովն ընդունում է, որ կողմերի միջև առկա վեճերը հաշտությամբ լուծելն ավելի ցանկալի է, քան անմիջապես դատարան դիմելը, և որ դատարան դիմելը պետք է լինի ամենավերջին միջոցը: Այն նաև նկատում է, որ գործնականում սպառողը հակված կլինի նախընտրելու ոչ դատական լուծումներ, եթե այդպիսիք առկա են: Այս առումով, գործում են և օպերատորների, և կառույցների կողմից իրականացվող բազմաթիվ ծրագրեր, որոնց նպատակն է խթանել վեճերի լուծման այլընտրանքային համակարգերի ձևավորումը: Սակայն, հաշվի առնելով առաջընթացի ներկա վիճակը, հնարավոր չէ միջազգային իրավազորության իմաստով, Կանոնակարգի համաձայն, սպառողին ընձեռվող տարբերակներից օգտվելու իրավունքը պայմանավորել նախապես վեճերի լուծման ոչ դատական համակարգի դիմելու պարտավորությամբ: Նախևառաջ, նման լուծումը կարող է սահմանադրական դժվարություններ առաջացնել որոշ անդամ պետություններում: Բացի այդ, նման պարտավորություն նախատեսելու համար անհրաժեշտ համակարգերը դեռ չեն գործում: Ավելին, դատավարական հարաբերությունները վեճերի այլընտրանքային լուծման համակարգերի և դատարանների միջև (օրինակ, վաղեմության ժամկետների առումով) խիստ բարդ են և լրացուցիչ ուսումնասիրման կարիք են զգում: Ցանկացած պարագայում, Հանձնաժողովը նախատեսում է հետամուտ լինել սպառողական վեճերի լուծման այլընտրանքային համակարգերի կապակցությամբ առկա նախաձեռնություններին: 65-րդ հոդվածի համաձայն՝ Կանոնակարգն ուժի մեջ

[97] Հոդված 17«1»:

[98] ՊՏ C 146, 17.05.2001թ., էջ 94:

[99] Փոփոխված առաջարկ, որը ներկայացվել է 2000թ. հոկտեմբերի 26-ին, COM(2000)689 final:

մտնելուց հինգ տարի հետո Հանձնաժողովի կողմից հրապարակվելիք զեկույցում կգնահատվի իրավիճակը և կվերանայվեն Կանոնակարգի համապատասխան դրույթները»:

46. Բրյուսելի I կանոնակարգը, ինչպես ընդունվել է Խորհրդի կողմից 2000 թվականի դեկտեմբերին, չի ներառում Պառլամենտի առաջարկած այս փոփոխությունները: Կանոնակարգն ընդունելիս Խորհուրդը և Հանձնաժողովը համատեղ հայտարարությունում[100] ընդգծեցին ՎԼԱ մեխանիզմների կարևորությունը. «Խորհուրդը և Հանձնաժողովն այն կարծիքին են, որ ընդհանուր առմամբ սպառողների և կազմակերպությունների շահերից է բխում, որպեսզի նրանք, նախքան դատարան դիմելը, փորձեն իրենց վեճերը լուծել հաշտությամբ: Խորհուրդը և Հանձնաժողովն այս կապակցությամբ ընդգծում են, որ Կանոնակարգի և մասնավորապես դրա 15-րդ և 17-րդ հոդվածների նպատակը կողմերին վեճերի լուծման այլընտրանքային մեթոդներից օգտվելն արգելելը չէ: Ուստի, Խորհուրդը և Հանձնաժողովը ցանկանում են վերահաստատել, թե որքան կարևոր է Եվրոպական համայնքի մակարդակով շարունակել աշխատանքը քաղաքացիական և առևտրային գործերի շրջանակում վեճերի լուծման այլընտրանքային մեթոդների ուղղությամբ՝ հետևելով Խորհրդի 2000 թվականի մայիսի 29-ի եզրակացություններին: Նրանք գիտակցում են այս աշխատանքի կարևոր նշանակությունը և ընդգծում են քաղաքացիական և առևտրային գործերի շրջանակում վեճերի լուծման այլընտրանքային մեթոդների օգտակար դերը, հատկապես էլեկտրոնային առևտրի ոլորտում: Համաձայն Կանոնակարգի 73-րդ հոդվածի՝ Հանձնաժողովը պետք է Եվրոպական պառլամենտին, Խորհրդին և Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեին ներկայացնի զեկույց Կանոնակարգի կիրարկման մասին՝ հարկ եղած դեպքում դրան կցելով վերանայման առաջարկներ: Խորհուրդը և Հանձնաժողովը համարում են, որ զեկույցը կազմելիս առանձնակի ուշադրություն պետք է դարձնել սպառողներին և փոքր ու միջին կազմակերպություններին վերաբերող Կանոնակարգի դրույթների կիրարկմանը՝ հատկապես էլեկտրոնային առևտրի առնչությամբ: Այս առումով, Հանձնաժողովը համապատասխան դեպքերում կառաջարկի Կանոնակարգի փոփոխություններ՝ նախքան Կանոնակարգի 73-րդ հոդվածում նշված ժամկետը լրանալը»:

### 2.2.2 Ընտանեկան իրավունքի ոլորտում նախաձեռնություններից օգուտներ քաղելը

47. 1998 թվականի դեկտեմբերին Վիեննայում կայացած Եվրոպական խորհրդի հանդիպմանը պետությունների կամ կառավարությունների ղեկավարները հաստատեցին Ամստերդամի համաձայնագրի՝ ազատության, անվտանգության և արդարության տարածք ստեղծելու մասին դրույթների կիրարկման համար արդյունավետ միջոցառումների վերաբերյալ Խորհրդի և Հանձնաժողովի գործողությունների ծրագիրը[101]: Այս գործողությունների ծրագրի պարբերություն 41«գ»–ով նախատեսվում են Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարվա ընթացքում իրականացվելիք միջոցառումները, այդ թվում՝ հետևյալը. “ուսումնասիրել վեճերի արտադատական լուծման մոդելներ ձևավորելու հնարավորությունը՝

---

[100] Խորհրդի և Հանձնաժողովի համատեղ հայտարարությունը Կոնվենցիայի 15-րդ և 73-րդ հոդվածների վերաբերյալ, որը զետեղված է 2000թ. դեկտեմբերի 22-ին այդ Կանոնակարգն ընդունելու նպատակով գումարված՝ Խորհրդի նիստի արձանագրությունում. http://europa.eu.int/comm/justice_home/unit/civil_en.htm

[101] ՊՏ C 19, 23.01.1999թ., էջ 1:

առանձնակի ուշադրություն դարձնելով անդրազգային ընտանեկան վեճերին: Այս համատեքստում, պետք է դիտարկել միջնորդությունը՝ որպես ընտանեկան վեճերը լուծելու միջոց”:

48. Հետևաբար, քաղաքական առաջնորդները գիտակցում են միջսահմանային ընտանեկան վեճերի լուծման գործում ՎԼԱ մեխանիզմների կարևոր դերը՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ վեճերը ներառում են ծնողական իրավունքների իրականացման հետ կապված խնդիրներ (երեխաների խնամքի կամ երեխաների հետ տեսակցելու իրավունքներ), ընտանեկան գույքի բաժանում կամ ալիմենտների սահմանում: Ուստի, վեճի կողմերը հնարավորություն կունենային դիմելու ՎԼԱ մեխանիզմների՝ նախքան դատարան դիմելու հնարավորությունը դիտարկելը կամ դատական վարույթի ընթացքում, կամ դատական ակտերի կատարման փուլում: Այդուհանդերձ, ՎԼԱ մեխանիզմների դիմելու հնարավորությունը սահմանափակ է, քանի որ այս ոլորտում կողմերն ազատ չեն իրենց իրավունքների իրականացման հարցում: Ըստ էության, ՎԼԱ մեխանիզմների օգտակարությունը կարելի է հարցականի տակ դնել ծայրահեղ վեճերի պարագայում:[102]

49. 2000 թվականի մայիսի 29-ին Խորհուրդն ընդունեց «Ամուսնական գործերով և ամուսինների համատեղ երեխաների նկատմամբ ծնողական իրավունքների վերաբերյալ գործերով իրավասության և որոշումների ճանաչման ու կատարման մասին» Խորհրդի (ԵՀ) թիվ 1347/2000 կանոնակարգը (Բրյուսելի II կանոնակարգ):[103] Այս կանոնակարգը շրջադարձային է այնքանով, որ հնարավորություն է ընձեռում Համայնքի ողջ տարածքում ճանաչել և ի կատար ածել Կանոնակարգով սահմանված իրավասության մասին կանոնների պահպանմամբ կայացված որոշումները: Այդուհանդերձ, Բրյուսելի II կանոնակարգով ստեղծված համակարգը հիմնված է իրավասության այնպիսի չափանիշների վրա, որոնք կարող են հանգեցնել այնպիսի իրավիճակի, որում իրավասություն կարող են ունենալ մեկից ավելի դատարաններ: Կանոնակարգի 11-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքում, երբ գործը ներկայացվում է տարբեր անդամ պետությունների դատարաններ, գործով վճիռ կայացնում է այն դատարանը, որն առաջինն է գործն ընդունել վարույթ:[104] Հետևաբար, այս համակարգը կարող էր կողմերին դրդել հնարավորինս արագ վեճը ներկայացնել իրավասություն

---

102 Ցավոտ դաս կարելի է քաղել այն վեճից, որը կապված է երեխային առևանգելու դեպքում երեխաների խնամքի և երեխաների հետ տեսակցելու իրավունքների հետ, երբ վերջում որոշվում է երեխային չվերադարձնել: Այս պարագայում շատ կարևոր է տեսակցելու իրավունք ընձեռել «տուժող» ծնողին թե որոշումը կայացնելուց հետո, թե այդ ծնողի ներկայացրած՝ երեխային վերադարձնելու մասին դիմումը քննելու ընթացքում, որը կարող է մի քանի ամիս տևել: Տեսակցելու իրավունքի մասին որոշում կայացնելու նպատակով ՎԼԱ մեխանիզմից օգտվելու խոչընդոտներ կարող են լինել ոչ միայն ծնողների միջև հաղորդակցության խնդիրները, այլ նաև՝ տեսակցելու իրավունքը ճանաչելու մասին ՎԼԱ ընթացակարգով ձեռք բերված լուծում ընդունելու՝ «տուժող» ծնողի հնարավոր դժկամությունը: Վերջինս, ըստ էության, կարող է նման լուծումը համարել վերականգնված կամ գործող՝ իր տեսակցելու իրավունքի իրականացման փորձերը սահմանափակող տարբերակ:

103 ՊՏ L 160, 30.06.2000թ., էջ 19: Սույն «Բրյուսելի II կանոնակարգը» ներառում է Ամուսնական գործերով իրավասության և որոշումների ճանաչման ու կատարման մասին «Բրյուսելի II կանոնակարգի» բովանդակությունը, որը հաստատվել է Խորհրդի 1998թ. մայիսի 28-ի ակտով, տես ՊՏ C 221, 16.07.1998թ., էջ 1:

104 Քննության մեջ գտնվող հայցեր՝ «lis pendens»:

ունեցող այն դատարան, որն առավել համապատասխանում է իրենց շահերին, առանց նախապես դիմելու ՎԼԱ մեխանիզմների :

50. 2001 թվականի սեպտեմբերի 6-ին Հանձնաժողովն ընդունեց «Ամուսնական գործերով և ծնողական իրավունքների վերաբերյալ գործերով իրավասության և որոշումների ճանաչման և կատարման մասին» Խորհրդի կանոնակարգի նախագիծ (Բրյուսելի II կանոնակարգի նոր տարբերակի նախագիծ[105]): Նշված նախագծի նպատակն է Բրյուսելի II կանոնակարգով նախատեսված՝ ճանաչման ու կատարման վերաբերյալ դրույթների գործողությունը տարածել ծնողական իրավունքների վերաբերյալ կայացվող բոլոր որոշումների վրա: Նախագծում Հանձնաժողովը փորձեց երկու առումներով խթանել ՎԼԱ մեխանիզմների օգտագործումը: Առաջին, նախագծով նախատեսվում է իրավասության մասին կանոնների այնպիսի համակարգ, որտեղ յուրաքանչյուր գործի համար սահմանվում է որոշում կայացնելու իրավասություն ունեցող մեկ ատյան: Երկրորդ, նախագծով ստեղծվում է իրավասու մարմինների միջև համագործակցության համակարգ:

51. Բրյուսելի II կանոնակարգի նոր տարբերակի նախագիծը հիմնված է կենտրոնական մարմինների միջև համագործակցության համակարգի վրա, որոնք կարող են ակտիվ դեր խաղալ ծնողական իրավունքների արդյունավետ իրականացումը երաշխավորելու գործում՝ ներառյալ ՎԼԱ մեխանիզմները խթանելու միջոցով:[106] Ավելին, ընտանեկան վեճերի համատեքստում միջսահմանային համագործակցության և ՎԼԱ մեխանիզմների խթանման նման համակարգ արդեն նախատեսված էր երեխաների հետ տեսակցելու իրավունքների վերաբերյալ որոշումների փոխադարձ կատարման մասին Խորհրդի կանոնակարգ ընդունելու համար 2000 թվականի հուլիսի 3-ին Ֆրանսիայի ներկայացրած նախաձեռնության մեջ:[107]

### 2.2.3 Աշխատանքային հարաբերությունների ոլորտում ՎԼԱ մեխանիզմների զարգացման խթանումը

52. ՎԼԱ մեխանիզմներն արդեն իսկ բոլոր անդամ պետություններում աշխատանքային հարաբերություններում ծագող վեճերի լուծման կարևոր բաղադրիչներ են: Դրանք

---

105 COM(2001) 505 final, ՊՏ C 332E, 27.11.2001թ., էջ 269:

106 Այս առաջարկի 16-րդ և 17-րդ հոդվածների համաձայն՝ «Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է նշանակի կենտրոնական մարմին, որը կաջակցի Կանոնակարգի կիրառմանը… Կենտրոնական մարմինները պարտավոր են համագործակցել կոնկրետ գործերի շրջանակում՝ երեխայի նկատմամբ ծնողական իրավունքների արդյունավետ իրականացումը երաշխավորելու նպատակով: Այս առումով, իրենց օրենքներին համապատասխան, նրանք պարտավոր են … միջնորդության և այլ միջոցներով նպաստել ծնողական իրավունքներ կրողների միջև համաձայնության հաստատմանը…»:

107 ՊՏ C 234, 15.08.2000թ., էջ 7: Այս նախաձեռնության 12-րդ հոդվածով նախատեսվում է անդամ պետությունների միջև համագործակցության համակարգ՝ «նրանց կողմից նշանակվող ներպետական կենտրոնական մարմինների միջոցով, … որպեսզի ապահովվի երեխաների հետ տեսակցելու իրավունքների արդյունավետ իրականացումը և տեսակցելու ժամկետի ավարտին նրանց անհապաղ վերադարձը խնամքի իրավունք ունեցող ծնողին…: Մասնավորապես, այդ մարմինները պարտավոր են կամ անմիջականորեն, կամ որևէ միջնորդի միջոցով համապատասխան քայլեր ձեռնարկել՝ … հաշտեցման, միջնորդության կամ նմանատիպ այլ միջոցներով նպաստելու ծնողների միջև տեսակցելու իրավունքների իրականացման մասին համաձայնության հաստատմանը»:

ձևավորվել են որոշակի ընթացակարգերի հիման վրա, որոնցում գերիշխող դեր են կատարում սոցիալական գործընկերները (գործատուների և աշխատողների ներկայացուցիչները): Աշխատանքային հարաբերություններում ՎԼԱ մեխանիզմներն օգտակար են այնպիսի անհատական և կոլեկտիվ վեճերի լուծման հարցում, որոնք առնչվում են շահերին (հակադիր տնտեսական շահերի ներդաշնակեցում պահանջող կոլեկտիվ պայմանագրերի ընդունման կամ փոփոխման հարցում) և իրավունքների հետ կապված վեճերին (պայմանագրերի կամ կարգավորող դրույթների մեկնաբանության և կիրառման հարցում): Աշխատանքային հարաբերություններում ՎԼԱ մեխանիզմների մեծ մասը կազմակերպվում է հենց իրենց՝ սոցիալական գործընկերների կողմից: Չախողվելու դեպքում նրանք կարող են դիմել պետական մարմինների կողմից առաջարկվող ՎԼԱ կառույցներին: Ընթացակարգերը տարբեր անդամ պետություններում տարբեր են, սակայն, ընդհանուր առմամբ, դրանք կամավոր են թե՛ դրանց դիմելու որոշման, թե՛ արդյունքն ընդունելու առումներով:

53. Այն փաստը, որ անդամ պետությունների մեծ մասում ՎԼԱ նշված մեխանիզմներն առկա են և կիրառվում են այն դեպքում, երբ սոցիալական գործընկերները գոհացուցիչ արդյունքի չեն հասել, դրդել է Միության կառույցներին դիտարկել անդրազգային վեճերի համար ՎԼԱ եվրոպական մեխանիզմներ ստեղծելու նպատակահարմարությունը: 2000 թվականի հունիսի 28-ի իր հաղորդագրությունում («Սոցիալական քաղաքականության օրակարգ»)[108] Հանձնաժողովը եվրոպական սոցիալական մոդելի արդիականացման համատեքստում նշեց, որ անհրաժեշտ է անդրադառնալ վեճերի կանխարգելման և միջնորդության գործիքների ստեղծման խնդրին: Հանձնաժողովը հայտարարեց, որ մտադիր է «սոցիալական գործընկերների հետ քննարկել եվրոպական մակարդակով վեճերի լուծման համար միջնորդության, արբիտրաժի և հաշտեցման կամավոր մեխանիզմներ ստեղծելու անհրաժեշտությունը»: Հանձնաժողովն արդեն սկսել է նախապատրաստական աշխատանքն այս ուղղությամբ: Այն ֆինանսավորում է անդամ պետություններում աշխատանքային վեճերի լուծման մեխանիզմների գործելակերպին նվիրված ուսումնասիրության անցկացումը: Արդյունքները պատրաստ կլինեն 2002 թվականի ապրիլին և դրանց մասին կտեղեկացվեն լայն շրջանակները: Հանձնաժողովը դիտարկում է եվրոպական մեխանիզմներ ստեղծելու հնարավորությունը, դրանց օգտակարությանը և դրանց գործելակերպին առնչվող խնդիրները: 2001 թվականի դեկտեմբերի 3-ին Խորհուրդը («Զբաղվածության և սոցիալական հարցեր») ողջունեց Հանձնաժողովի մտադրությունը և վերջինիս կոչ արեց զեկուցել վեճերի լուծման կամավոր եվրոպական մեխանիզմներ ստեղծելու անհրաժեշտության վերաբերյալ սոցիալական գործընկերների հետ անցկացրած խորհրդակցությունների արդյունքները:[109] 2001 թվականի դեկտեմբերի 14-ին և 15-ին Եվրոպական խորհրդի՝ Լայկենում գումարված նիստում ընդգծվեց «սոցիալական վեճերը և, հատկապես, անդրազգային սոցիալական վեճերը կանխելու և միջնորդության կամավոր մեխանիզմների միջոցով լուծելու կարևորությունը, որոնց վերաբերյալ Հանձնաժողովին խնդրվում է ներկայացնել փաստաթուղթ, որը հիմք կծառայի քննարկման համար»:[110]

---

108 COM(2000)379, 28.06.2000թ.:

109 Սոցիալական միջնորդության թեմայով Խորհրդի նիստի («Զբաղվածություն և սոցիալական հարցեր») եզրակացությունները. http://ue.eu.int/newsroom

110 Նախագահության եզրակացությունների 25-րդ կետը:

## 3. ՎԼԱ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

54. Ներպետական, Համայնքային և միջազգային մակարդակով առ այսօր տեղի ունեցած քաղաքական և օրենսդրական բոլոր ջանքերը, նախաձեռնությունները և բանավեճերը նպատակ են հետապնդել ապահովելու ՎԼԱ մեխանիզմների որակը, մասնավորապես, դրանց հասանելիությունը, արդյունավետությունը և արդարացիության երաշխիքները՝ միաժամանակ պահպանելով դրանց ճկունությունը: Այս երկակի նպատակին հասնելու համար պետք է որոշել, թե արդյոք մոտեցումը պետք է լինի ճյուղային, թե զլոբալ, և թե արդյոք նախաձեռնվող ծրագրերում պետք է տարբերակել վերաբերմունքը ՎԱԼ-ի և ավանդական մեթոդների նկատմամբ:

### 3.1 Ինչ մոտեցում պետք է որդեգրել

55. Սույն Կանաչ փաստաթղթի վերաբերյալ արձագանքը, այսինքն, տրվող բոլոր հարցերի պատասխանները և ընդհանուր մեկնաբանությունները, նպատակ են հետապնդում պարզելու, թե ինչպիսի մոտեցում պետք է որդեգրի Հանձնաժողովը ՎԼԱ մեխանիզմների կիրառությունը խթանելու գործում: Այս արձագանքով կարող է որոշվել, թե որքան պետք է կարևորել ՎԼԱ մեխանիզմների վերաբերյալ Համայնքային կանոնների ընդունումը: Ցանկացած պարագայում, այդ կանոնները պետք է համալրեն Համայնքային կառույցների կողմից ՎԼԱ մեխանիզմների գործառնական, ֆինանսական և տեխնիկական առումներով արդեն իրականացված և ապագայում իրականացվելիք աշխատանքը: Այդ կանոնների համար իրավական հիմքի ընտրությունը կախված է դրանց ճշգրիտ բովանդակությունից և գործողության ոլորտից:

56. Եթե պարզվի, որ նման կանոններն օգտակար են, ապա հետագայում կորոշվեն դրանց գործողության ոլորտը, մակարդակն ու բովանդակությունը: Համապատասխան փաստաթղթի (կանոնակարգ, հրահանգ կամ առաջարկություն) ընտրությունը պետք է կատարել նախատեսվող միջոցառումների բնույթին համապատասխան: Հետևաբար, ցանկացած միջոցառում, որ կարող է իրականացվել սույն Կանաչ փաստաթղթին համապատասխան և խորհրդակցությունների հիման վրա, պետք է նաև պահպանի լրացուցչության (subsidiarity) և համաչափության՝ ԵՀ համաձայնագրի 5-րդ հոդվածով և լրացուցչության ու համաչափության սկզբունքների կիրառման մասին արձանագրությամբ նախատեսված սկզբունքները:[111]

57. Եթե որոշվի խնդիրը չկարգավորել Համայնքի մակարդակում՝ նպատակ ունենալով նպաստել ՎԼԱ մեխանիզմներին նվիրված ներպետական օրենքների և պրակտիկայի հետագա զուգամիտմանը, ապա Հանձնաժողովը, որպես լուծման տարբերակ, կարող է շարունակել համեմատական իրավունքի ոլորտում հետազոտություններին և համագործակցությանն աջակցելու իր քաղաքականության իրագործումը, հատկապես բուհերի և իրավունքի պրակտիկ մասնագետների, այդ թվում՝ դատավորների և փորձագետների միջև: Այդպիսի համագործակցությունը կարող է ուղղված լինել ՎԼԱ

---

[111] ՊՏ C 340, 10.11.1997թ., էջ 105: Այսպիսով, ելնելով լրացուցչության սկզբունքից, միջոցները պետք է հետապնդեն այնպիսի նպատակներ, որոնք անդամ պետությունները չեն կարողանա բավարար չափով իրագործել, ուստի, դրանք պետք է հնարավոր լինի իրագործել միայն Համայնքի մակարդակով: Ավելին, ելնելով համաչափության սկզբունքից՝ միջոցները չպետք է լինեն ավելին, քան անհրաժեշտ է նշված նպատակներին հասնելու համար:

մեխանիզմների հետ կապված ոլորտներում ընդհանուր սկզբունքների սահմանմանը, որը կարող է ներառել ՎԼԱ մեխանիզմների որոշակի տեսակների համար կոնկրետ ուղենիշների կամ վարքագծի կանոնագրքերի մշակումը: Էլեկտրոնային առևտրի պարագայում առևտրային և սպառողների ասոցիացիաները և կազմակերպություններն իրենք են մշակում վարքագծի կանոնագրքեր Համայնքի մակարդակով, որոնցով կարգավորվում են տեղեկատվական հասարակության ծառայությունները՝ էլեկտրոնային առևտրի մասին հրահանգի 16-րդ հոդվածին համահունչ:[112] Կարելի է դիտարկել ՎԼԱ գործընթացի տարբեր մասնակիցների համար վարքագծի ընդհանուր կանոնագրքեր մշակելու հնարավորությունը, որոնք կգործեն տարածաշրջանի կամ համաշխարհային մակարդակներով, և ՎԼԱ մեխանիզմների շրջանակում ընթացակարգային մի շարք երաշխիքներ կնախատեսեն:

58. Սույն Կանաչ փաստաթղթի առաջին երկու մասերում («Համառոտ ակնարկ» և «Արդեն կատարված աշխատանքից օգուտներ քաղելը») Հանձնաժողովը փորձել է ոչ միայն «գույքագրել» արդեն կատարված աշխատանքը, այլ նաև՝ ներկայացնել ապագայում հնարավոր այլ նախաձեռնությունների քաղաքական և իրավական հետևանքները: Այդ հետևանքները կարող են շարադրվել հարցերի տեսքով.

Հարց 1. Գոյություն ունե՞ն խնդիրներ, ինչպիսիք են ՎԼԱ մեխանիզմների վերաբերյալ Համայնքի գործողությունների հիմնավորումը: Եթե այո, ապա որո՞նք են դրանք: Ինչպիսի՞ն է Ձեր կարծիքը ՎԼԱ մեխանիզմների նկատմամբ ընդհանուր մոտեցման վերաբերյալ, որ պետք է որդեգրեն Եվրոպական միության կառույցները, և ինչպիսի՞ն պետք է լինի ԵՄ կառույցների այդպիսի նախաձեռնությունների շրջանակը:

Հարց 2. Պե՞տք է նախաձեռնությունները սահմանափակել կոնկրետ մեկ ոլորտի (օրինակ՝ առևտրային իրավունք կամ ընտանեկան իրավունք) նկատմամբ կիրառվող սկզբունքների սահմանմամբ՝ ոլորտ առ ոլորտ, և, այսպիսով, խտրականություն դնել տարբեր ոլորտների միջև, թե՞ պետք է հնարավորինս ընդգրկել քաղաքացիական և առևտրային իրավունքով կարգավորվող բոլոր ոլորտները:

Հարց 3. Նախաձեռնությունները պե՞տք է առանձին-առանձին անդրադառնան վեճերի առցանց լուծման (ՎԱԼ) (սա նոր զարգացող ոլորտ է, որը տարբերվում է մյուսներից՝ պայմանավորված նորարարության բարձր մակարդակով և նոր տեխնոլոգիաների զարգացման մեծ տեմպերով) և ավանդական մեթոդներին, թե՞ ընդհակառակը՝ տարածվեն բոլոր մեթոդների վրա՝ առանց որևէ տարբերակման:

Հարց 4. Ինչպե՞ս կարելի է ՎԼԱ մեխանիզմների դիմելու հնարավորությունը ներդնել ընտանեկան իրավունքի ոլորտում:

### 3.2 Ընդհանուր մոտեցումը ՎԼԱ մեխանիզմների նկատմամբ

59. Անկախ այն հանգամանքից, թե որ մեթոդն է ընտրվում Համայնքի կողմից, ծագում են մի շարք հարցեր, հատկապես արդարադատության մատչելիությանը, որակի նվազագույն չափանիշներին և երրորդ անձանց կարգավիճակին ներկայացվող պահանջների առումով:

112 Տե՛ս սույն Կանաչ փաստաթղթի 41-րդ պարբերությունը:

### 3.2.1 ՎԼԱ-ն և արդարադատության հասանելիությունը

60. Սույն Կանաչ փաստաթղթի «Համառոտ ակնարկ» բաժնում Հանձնաժողովը ձգտել է ներկայացնել այն դերը, որ կարող են ունենալ ՎԼԱ մեխանիզմները արդարադատության՝ բոլորի համար մատչելիության ընդհանուր համատեքստում: Այն փաստը, թե ինչպես են իրականում գործում ՎԼԱ մեխանիզմները, նույնպես պետք է վերլուծել արդարադատության մատչելիության տեսակետից: Այնուհետ, պետք է սահմանել ՎԼԱ մեխանիզմների դիմելու վերաբերյալ պայմանագրային դրույթների, վաղեմության ժամկետների, գաղտնիության, ՎԼԱ մեխանիզմների արդյունավետության և երրորդ անձանց պատասխանատվության շրջանակը:

#### 3.2.1.1 ՎԼԱ մեխանիզմների դիմելու կարգը

61. Որոշ անդամ պետություններ իրենց օրենսդրությամբ ամրագրել են գործը դատարան ներկայացնելուց առաջ ՎԼԱ մեխանիզմների դիմելու պարտավորությունը:[113] Այդուհանդերձ, օրենսդրության շրջանակները սահմանափակ են և վերաբերում են կոնկրետ թեմատիկ ոլորտների: Անդամ պետությունների օրենսդրությամբ սովորաբար նախատեսվում է, որ ՎԼԱ մեխանիզմների դիմելը կամընտիր է. կամ կողմերն ընդունում են դատավորի առաջարկը, կամ կողմերից մեկը նախաձեռնություն է ստանձնում, իսկ մյուս կողմը՝ ընդունում:

62. Հավանական է, սակայն, որ ՎԼԱ մեխանիզմների դիմելու վերաբերյալ պայմանագրային դրույթներն ազդեն դատարանների մատչելիության իրավունքի վրա, քանի որ ՎԼԱ մեխանիզմները կարող են ուշացնել կամ խոչընդոտել դատարանի կողմից գործի քննությունը:[114] Հետևաբար, հնարավոր է, որ ՎԼԱ մեխանիզմների դիմելու հնարավորությունը սահմանափակի արդարադատության մատչելիությունը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հոդված 6«1» և Հիմնարար իրավունքների Եվրոպական միության խարտիայի 47-րդ հոդվածի իմաստով:[115]

63. Ընդհանուր առմամբ, ՎԼԱ մեխանիզմների դիմելու հնարավորությունը բնութագրվում է կոնսենսուսային մոտեցմամբ: Համաձայնության ազատությունն արտահայտվում է դրա իրականացման բոլոր փուլերում: Եթե կողմերը գտնվում են պայմանագրային հարաբերությունների մեջ, ապա նրանք կարող են կանխատեսել հնարավոր վեճը՝ պայմանագրով ամրագրելով դրույթ, որն իրենց կպարտադրի տվյալ պայմանագրի հետ կապված ցանկացած վեճի դեպքում դիմել ՎԼԱ ընթացակարգի: Եթե կողմերը պայմանագրում չեն ամրագրել ՎԼԱ մեխանիզմների մասին վերապահում, ապա վեճի դեպքում նրանք ազատ են համաձայնության գալու ՎԼԱ ընթացակարգի միջոցով՝ դատարանի օգնությամբ կամ առանց դրա:

---

113 Տե՛ս սույն Կանաչ փաստաթղթի 28-րդ պարբերությունը:

114 Վաղեմության ժամկետների կասեցման մասին դրույթներ նախատեսելով՝ կարելի է բացառել ՎԼԱ ընթացակարգից հետո հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու վտանգը, տե՛ս ստորև՝ 3.2.1.2 կետը:

115 Խարտիայի հոդված 47«1»–ի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ում՝ Միության իրավական նորմերով երաշխավորված իրավունքները և ազատությունները խախտվել են, իրավունք ունի արդյունավետ պաշտպանություն ստանալ տրիբունալի կողմից՝ սույն հոդվածով նախատեսված պայմանների պահպանմամբ»:

64. Հետևաբար, կարող ենք հարցականի տակ դնել այդ վերապահումներին պարտադիր բնույթ հաղորդելու արդյունավետությունը, քանի որ անիմաստ է մեկին իր կամքին հակառակ պարտադրել, որ մասնակցի ՎԼԱ ընթացակարգին, որովհետև ընթացակարգի հաջողությունը կախված է նրա կամքից:

65. Երբ կողմերն ազատ են իրենց իրավունքների իրականացման հարցում, ՎԼԱ մեխանիզմների մասին համաձայնությամբ նախատեսվող պարտավորությունները չկատարելու դեպքում լուծումներ կարելի է գտնել կողմերի կամքի մեկնաբանության և պայմանագրային իրավունքի նորմերի միջոցով: Հետևաբար, դատարան դիմելը, որը հավասարազոր է պայմանագրով նախատեսված ՎԼԱ ընթացակարգին մասնակցելու դրույթից հրաժարման, կարող է պատժվել՝ որպես պայմանագրային պարտավորության խախտում: Նման հրաժարման արդյունքում դատավորը, ում ներկայացվել է հայց պայմանագրի այլ դրույթների կատարման վերաբերյալ, կարող է հայցն անընդունելի ճանաչել: Նմանապես, ՎԼԱ ընթացակարգին մասնակցելուց հրաժարվելը կարող է համարվել բարեխղճության պահանջի խախտում:

66. Ի վերջո, հարց է ծագում նմանատիպ վերապահումների գործողության շրջանակի վերաբերյալ այն դեպքում, երբ պայմանագրի կողմերի միջև առկա է ուժերի անհավասարակշռություն: Անդամ պետություններից շատերի օրենսդրությամբ որոշակի կարևորություն է տրվում պայմանագրի մասնակից թույլ կողմերի պաշտպանության խնդրին, ինչպիսիք են, օրինակ, վարձու աշխատողները՝ գործատուների հետ պայմանագրերում, վարձակալները՝ վարձատուների հետ պայմանագրերում, ապահովագրվածը՝ ապահովագրողի հետ պայմանագրում, սպառողը՝ մասնագետի հետ պայմանագրում, վաճառականը՝ խոշոր մանրածախ վաճառք իրականացնող վաճառողի հետ պայմանագրում, արտադրողը՝ առևտրի կենտրոնի հետ պայմանագրում կամ նույնիսկ գործընկերը (փոքրամասնություն կազմող բաժնետերը)՝ ընկերության հետ պայմանագրում:

67. Այս համատեքստում կարելի է հարց բարձրացնել այն մասին, թե արդյոք սպառողական պայմանագրերում ՎԼԱ մեխանիզմների մասին վերապահումներ նախատեսելը սկզբունքորեն արգելված չէ «Անարդար դրույթների մասին» 93/13/ԵՏՀ հրահանգով:[116] Այդ հրահանգի համաձայն՝ «պայմանագրի այն դրույթը, որի շուրջ առանձին չի բանակցվել, համարվում է անարդար, եթե բարեխղճության պահանջին հակառակ՝ այն զգալի անհավասարակշռություն է առաջացնում կողմերի՝ տվյալ պայմանագրից բխող իրավունքների և պարտավորությունների միջև՝ ի վնաս սպառողի»: Հրահանգի հավելվածը պարունակում է այն դրույթների օրինակելի, բայց ոչ սպառիչ ցանկը, որոնք կարող են անարդար ճանաչվել, ի թիվս այլոց, «դրույթներ ...՝ խոչընդոտելու կամ բացառելու սպառողի՝ հայց ներկայացնելու կամ իրավական պաշտպանության որևէ այլ միջոցից օգտվելու իրավունքը»:

| |
|---|
| Հարց 5. Հարկավո՞ր է համապատասխանեցնել անդամ պետությունների օրենսդրությունն այնպես, որ յուրաքանչյուր անդամ պետությունում ՎԼԱ մեխանիզմների մասին վերապահումներն ունենան միևնույն իրավական արժեքը:<br><br>Հարց 6. Եթե այո, ապա այդ վերապահումների վավերությունը պե՞տք է համընդհանուր կարգով ընդունվի, թե՞ այդ վավերությունը պետք է սահմանափակվի այն դեպքերով, երբ |

[116] «Սպառողների հետ կնքված պայմանագրերում չարաշահումներ պարունակող դրույթների մասին» Խորհրդի 1993թ. ապրիլի 5-ի 93/13/ԵՏՀ հրահանգ, ՊՏ L 95, 21.04.1993թ. էջ 29:

դրանք առկա են անդամակցության պայմանագրերում ընդհանրապես կամ, սպառողների հետ պայմանագրերում մասնավորապես:

Հարց 7. Ամեն դեպքում, այդ վերապահումները գործողության ի՞նչ շրջանակ պետք է ունենան:

Հարց 8. Հարկավո՞ր է համարել, որ նշված դրույթների խախտման դեպքում դատարանը վեճը քննելու իրավասություն չունի, գոնե տվյալ պահին:

**3.2.1.2 Հայցային վաղեմության ժամկետները**

68. ՎԼԱ ընթացակարգերի դիմելու հնարավորությունը կարող է ազդել արդարադատության մատչելիության վրա, քանի որ վերջիններիս դիմելու դեպքում չի կասեցվում դատարանի կողմից գործը քննելու համար սահմանված վաղեմության ժամկետի հաշվարկը: ՎԼԱ ընթացակարգի վերջում, և ընթացակարգի ձախողման դեպքում, հնարավոր է, որ վաղեմության ժամկետը բաց թողնվի կամ անհիմն չափով կրճատվի:

69. Որոշ անդամ պետություններ իրենց օրենսդրությամբ ամրագրել են, որ ՎԼԱ մեխանիզմներով զբաղվող որոշ մարմինների դիմելու դեպքում ՎԼԱ ընթացակարգով քննվող հայցի վաղեմության ժամկետը կասեցվում է:[117] Ուստի, հնարավոր է, որ ՎԼԱ մեխանիզմները խթանելու համար անհրաժեշտ կլինի փոխել քաղաքացիական դատավարության՝ վաղեմության ժամկետները կարգավորող նորմերը, և նախատեսել, որ ժամկետի հաշվարկը կարող է ընդհատվել ՎԼԱ ընթացակարգի սկսվելու դեպքում և վերսկսվել այն ժամանակ, երբ ՎԼԱ ընթացակարգը ավարտվի առանց որևէ կարգավորման:

70. Այդուհանդերձ, նման կանոն նախատեսելը կարող է որոշակի խնդիրներ առաջացնել, քանի որ անհրաժեշտ կլինի ստույգ սահմանել ՎԼԱ ընթացակարգերը և որոշել դրանց սկսվելու ու ավարտվելու ճշգրիտ պահը:

71. Միջսահմանային վեճի օրինակով, երբ կողմերն ապարդյուն փորձել են օգտվել ՎԼԱ ընթացակարգից անդամ պետություններից որևէ մեկում՝ մեկ այլ անդամ պետության դատարանների իրավասությանը ենթակա վեճը լուծելու համար, պարզ է դառնում բոլոր անդամ պետություններում կանոնի փաստացի բովանդակության և դրանից օգտվելու համար ներկայացվող ապացույցների առումով միևնույն պայմանները կիրառելու կարևորությունը: Այսպիսի վեճի նկատմամբ կիրառվող վաղեմության ժամկետների մասին կանոնները, որոնք նախատեսված են իրավասու դատարանի երկրի քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերով (“*lex fori*”), կարող են նախատեսել ժամկետի կասեցում, սակայն, որպեսզի կողմերը կարողանան օգտվել այդ հնարավորությունից, նրանք պետք է ապացույցներ ներկայացնեն առ այն, որ իրենք կարողացել են արդյունավետորեն օգտվել ՎԼԱ ընթացակարգից, և որ այդ ընթացակարգը փաստացի իրականացվել է տվյալ ժամանակահատվածի ընթացքում:

117 Այդպես է Գերմանիայում, որտեղ ներգրավվող ՎԼԱ մեխանիզմներով զբաղվող մարմինները հաստատվում են տվյալ հողի դատական վարչության կողմից:

| |
|---|
| Հարց 9. Հարկավո՞ր է ներդաշնակեցնել Անդամ պետությունների օրենսդրությունը այնպես, որ բոլոր անդամ պետություններում ՎԼԱ ընթացակարգի դիմելու դեպքում կասեցվի դատարան դիմելու համար սահմանված վաղեմության ժամկետի հաշվարկը: |

### 3.2.2 Որակի նվազագույն չափանիշները

72. ՎԼԱ մեխանիզմները ճկուն են, սակայն դրանք պետք է հիմնվեն որակի նվազագույն չափանիշների, այդ թվում՝ ընթացակարգային որոշ ելակետային սկզբունքների վրա: Դատական վարույթի համատեքստում ՎԼԱ ընթացակարգերը կարգավորվում են պետական մարմինների կողմից և իրականացվում դատարանի վերահսկողության ներքո: ՎԼԱ պայմանագրային մեխանիզմները հիմնված են ընթացակարգային որոշակի սկզբունքների վրա, որոնք ազատորեն ընտրել են կողմերը: Օրինակ՝ նրանք առաջնորդվում են ընթացակարգային այն կանոններով, որոնք մասնագիտական ասոցիացիաների կողմից կամ վարքագծի կանոնագրքերով առաջարկվում են որպես օրինակելի կանոններ: Ուստի, հարց է ծագում, թե ինչպես կարելի է լավագույնս ապահովել նշված ընթացակարգային սկզբունքների փաստացի կիրառությունը: Ինքնակարգավորման նախաձեռնություններ կարող են դրսևորվել՝ տեղեկատվական հասարակության համար առաջարկված նախաձեռնությունների օրինակով: Հանձնաժողովն ակտիվորեն օժանդակում է այդ նախաձեռնություններին, սակայն մտահոգված է դրանց մասնակիցներին քաջարելելու անհրաժեշտությամբ, որպեսզի վերջիններս կատարելագործեն երրորդ անձի կողմից վերահսկողության համակարգերը և ներդնեն վստահության նշագրման (trustmarking) և հավաստագրման մեխանիզմներ:[118] Ինքնակարգավորման նախաձեռնությունների քաջալերումը կարող է բարձրացնել վստահությունը ՎԼԱ ընթացակարգերի նկատմամբ՝ միաժամանակ պահպանելով դրանց ճկունությունը և կանխելով ավելի պարտադիր բնույթ ունեցող հանրային գործիքներ կիրառելու անհրաժեշտությունը:

73. Ինչպես ավելի վաղ նշվեց, սպառողական վեճերի համատեքստում Հանձնաժողովն ընդունել է երկու առաջարկություն ազգային կամ անդրազգային սպառողական վեճերի լուծման գործառույթներ ունեցող արտադատական մարմինների նկատմամբ կիրառվող սկզբունքների վերաբերյալ:[119] Այդ առաջարկություններն ըստ էության նպատակ ունեն ապահովել ՎԼԱ մեխանիզմների շրջանակում նվազագույն որակի երաշխիքների առկայությունը, ինչպիսիք են, օրինակ, անկախությունը, անկողմնակալությունը, թափանցիկությունը, արդյունավետությունը և իրավունքի նորմերի պահպանումը: Սա հետևաբար մեծացնում է նշված չափանիշներին համապատասխանող մարմինների նկատմամբ վստահությունը:

74. Նշված սկզբունքները սահմանելու համար Հանձնաժողովը տարբերակում է մտցրել՝ կախված այն հանգամանքից, թե արդյոք երրորդ անձը պաշտոնապես դիրքորոշում է ընդունում վեճի հնարավոր լուծման վերաբերյալ,[120] թե պարզապես օգնում է կողմերին

---

118 Այս հարցերը քննարկվում են ՎԱԼ մասին հաղորդագրությունում, որի մասին նշվել է սույն Կանաչ փաստաթղթի 40-րդ պարբերությունում:

119 Տե՛ս սույն Կանաչ փաստաթղթի 37-րդ պարբերությունը:

120 Հարկ է նշել, որ այդ առաջարկությունը և սույն Կանաչ փաստաթուղթը մշակվել են այլ մոտեցմամբ և ունեն գործողության այլ շրջանակ: Ի տարբերություն սույն Կանաչ փաստաթղթի՝ առաջարկությունն անդրադառնում է արբիտրաժին: Ի տարբերություն առաջարկության՝ սույն Կանաչ փաստաթուղթն անդրադառնում է ՎԼԱ դատական մեխանիզմներին:

համաձայնության հասնել: Եթե երրորդ անձը պաշտոնապես միջամտում է բանակցություններին, ապա պետք է իր անկախության առումով որոշակի պահանջներ բավարարի, և ընթացակարգը պետք է հիմնված լինի մրցակցային բանավեճի սկզբունքի վրա, որտեղ յուրաքանչյուր կողմ պետք է ի վիճակի լինի ներկայացնելու իր տեսակետը, և գործընթացի յուրաքանչյուր քայլ, ցանկացած նմուշ, փաստաթուղթ կամ իրեղեն ապացույց, որը կներկայացնի հակառակորդ կողմը, պետք է ներկայացվի մյուս կողմին և ազատ քննարկվի: Եթե երրորդ անձի դերը պակաս միջամտողական է, ապա նշված պահանջները կարող են ավելի ճկուն դառնալ: Առաջին առաջարկությամբ նախատեսվում է յոթ սկզբունք՝ անկախություն, թափանցիկություն, մրցակցություն, արդյունավետություն, օրինականություն, ազատություն և ներկայացվածություն: Երկրորդ առաջարկությունը հիմնված է անկողմնակալության, թափանցիկության, արդյունավետության և արդարացիության սկզբունքների վրա:

75. Հանձնաժողովի առաջարկություններից առաջինն արդեն իրականացվել է անդամ պետություններում, որի վառ օրինակ է այն մարմինների մեծ թիվը, որոնք համարվում են առաջարկության սկզբունքներին համապատասխանող, և որոնց մասին անդամ պետությունները ծանուցել են Հանձնաժողովին, ինչպես նաև դրանց հանդիպումները «EEJ-Net» ցանցի շրջանակներում: Նշված առաջարկությունից են բխում և դրանով նախատեսված սկզբունքներին համահունչ են նաև «FIN-NET» ցանցի արդյունավետությունը և արժանահավատությունը: Առաջարկությունը Համայնքի օրենսդրության շրջանակներում ներկայումս ձեռք է բերում արտոնյալ կարգավիճակ:[121] Ինչ վերաբերում է երկրորդ առաջարկությանը, ապա բոլոր դիտորդները համակարծիք են, որ այն շատ օգտակար է: Այժմ անհրաժեշտ է երկու առաջարկություններին ժամանակ հատկացնել, որպեսզի դրանց կարևորությունն ապացուցվի գործնականում, սակայն սույն Կանաչ փաստաթղթի հիման վրա ծավալվող խորհրդակցությունները լավ հնարավորություն են ընձեռում՝ պարզելու շահագրգիռ շրջանակների կարծիքները դրանց արդյունավետության մասին:

76. Նման եղանակով Համայնքի միջոցառումներին նոր թափ հաղորդելու և առաջարկություններով նախատեսված սկզբունքների հիման վրա ձեռք բերված հաջողությունների պայմաններում կարելի է դիտարկել նոր նախաձեռնություններ ստանձնելու հնարավորություն, որոնք արդեն կարող են չսահմանափակվել սպառողների շահերի պաշտպանության մասին իրավական նորմերով և տարածվել իրավունքի այլ ճյուղերի վրա ևս: Սպառողական իրավունքի բնագավառում հաստատված այդ սկզբունքները կարող են, համապատասխան վերանայման դեպքում, օգտակար լինել ընդհանրապես ՎԼԱ մեխանիզմների համար: Խորհուրդը 2000 թվականի մայիսի 29-ի իր վերը նշված որոշման մեջ ցանկություն է հայտնել, որպեսզի Կանաչ փաստաթղթի և հետագայում ՎԼԱ ոլորտում իրականացվող աշխատանքի համար որպես գերակայություն ընդունվի «ընդհանուր և կոնկրետ ոլորտներում

---

[121] Էլեկտրաէներգիայի և բնական գազի ներքին շուկայի ընդհանուր կանոնների վերաբերյալ 96/92/ԵՀ և 98/30/ԵՀ հրահանգներում փոփոխություններ կատարելու մասին Պառլամենտի և Խորհրդի հրահանգի առաջարկ, COM(2001) 125, հավելված I(q). «Անդամ պետությունները պարտավոր են ապահովել վերջնական սպառողների բողոքների քննման թափանցիկ, պարզ և ոչ թանկ ընթացակարգերի առկայությունը: Անդամ պետությունները պարտավոր են ընդունել ակտեր, որոնց շնորհիվ այդ ընթացակարգերը թույլ կտան վեճերը լուծել արդարացիորեն և անհապաղ՝ անհրաժեշտության դեպքում ունենալով ծախսերի և (կամ) վնասների հատուցման համակարգ: Հնարավորության դեպքում, նրանք պետք է հետևեն Հանձնաժողովի 98/257/ԵՀ առաջարկությունում սահմանված սկզբունքներին»:

հիմնարար սկզբունքներ ամրագրելու հնարավորությունը, որոնք կընձեռեն անհրաժեշտ երաշխիքներ՝ ապահովելու արտադատական մարմինների կողմից վեճերի լուծման մեխանիզմների հուսալիության այն աստիճանը, ինչ պահանջվում է արդարադատություն իրականացնելու համար»:

77. Չնայած ՎԼԱ մեխանիզմները հիմնված են ընթացակարգային որոշ նվազագույն երաշխիքների վրա, դրանք կարող են հաստատվել օրենսդրության մակարդակով ամրագրվող ընդհանուր սկզբունքների տեսքով, այնուհետ՝ իրագործվել և կատարելագործվել ենթաօրենսդրական մակարդակում՝ վարքագծի կանոնագրքերի տեսքով: Այսպիսով, ընթացակարգի ելակետային սկզբունքները կարող են հաստատվել վարքագծի կանոնագրքի տեսքով: Իրականում, վարքագծի կանոնագրքերին առանձնակի ուշադրություն է դարձվում ՎԼԱ մեխանիզմների գործունեության շրջանակում: Դրանց զարգացումը ՎԼԱ մեխանիզմների որակը երաշխավորելու ուղղությամբ պրակտիկ մասնագետների ջանքերի վկայությունն է: Այս առումով, դրանց միջոցով սահմանված ընթացակարգային կանոնները նախատեսված են երրորդ անձանց անկողմնակալությունը երաշխավորելու, ընթացակարգում նրանց դերը հստակ սահմանելու, լուծում գտնելու վերջնաժամկետը սահմանելու և կնքվելիք համաձայնության նպատակով համապատասխան պայմանավորվածություններ ձեռք բերելու համար: Ուստի, նշված կանոնագրքերը կարող են ՎԼԱ մեխանիզմների որակի բարձրացման հիանալի միջոց լինել:

78. Ավելին, Հանձնաժողովը շատ կարևոր է համարում ընթացակարգային նվազագույն երաշխիքների շարքում ընդգծել գաղտնիությունը պահպանելու պարտավորության կարևորությունը:

**3.2.2.1 Գաղտնիությունը**

79. Դեպքերի մեծ մասում կողմերը, որոնք դիմում են ՎԼԱ մեխանիզմների, ցանկանում են գաղտնի պահել ընթացակարգի շրջանակներում փոխանակվող և բանավոր, և գրավոր տեղեկությունները՝ որոշ դեպքերում նույնիսկ մինչև այն պահը, երբ ընթացակարգը տալիս է փաստացի արդյունքներ: Գաղտնիությունը, ըստ երևույթին, ՎԼԱ մեխանիզմների հաջողության անհրաժեշտ նախապայման է, քանի որ այն օգնում է երաշխավորել կողմերի անկեղծությունը և վարույթի շրջանակներում փոխանակված տեղեկությունների արժանահավատությունը: Անհրաժեշտ է բացառել ՎԼԱ մեխանիզմների ցանկացած չարաշահում. վարույթի շրջանակում որևէ փաստաթուղթ կամ ապացույց ներկայացրած կողմը պետք է հնարավորություն ունենա ՎԼԱ ընթացակարգի ձախողման դեպքում դրանք օգտագործել դատարանում: Գաղտնիության պահանջը պարտադիր է թե՛ վեճի մասնակիցների, թե՛ երրորդ անձանց համար:

80. Գաղտնիության պահանջը պարտադիր է նախևառաջ կողմերի համար: Վարույթի ընթացքում կողմերի միջև փոխանակվող ցանկացած տեղեկություն չպետք է որպես ապացույց ընդունելի լինի հետագայում որևէ դատական կամ արբիտրաժային վարույթում: Սակայն, կարելի է նախատեսել որոշ բացառություններ: Օրինակ, կողմերը կարող են փոխադարձ համաձայնությամբ որոշել, որ ամբողջ վարույթը կամ դրա որոշ մաս գաղտնի չի լինելու: Կողմը կարող է ՎԼԱ ընթացակարգի վերաբերյալ ինչ-ինչ տեղեկություններ բացահայտել, եթե կիրառվող իրավական նորմերի համաձայն, կողմից պահանջվում է այդպես վարվել: Ի վերջո, կողմը կարող է բացահայտել կողմերի միջև առկա վեճը լուծող համաձայնությունը, եթե դա անհրաժեշտ է նշված համաձայնության իրականացման կամ կատարման համար:

81. Հատկապես շատ կարևոր է երրորդ անձանց համար գաղտնիության պահանջի պարտադիր լինելը: Երբ կողմերից մեկը երկկողմ քննարկումների ընթացքում (այս ընթացակարգը հայտնի է «caucus»՝ «փակ խորհրդակցություն» անվամբ) որոշակի տեղեկություններ է հաղորդում երրորդ անձին, ապա վերջինս չպետք է այդ տեղեկությունները որևէ այլ անձի բացահայտելու իրավունք ունենա: Ավելին, գաղտնիություն պահպանելու պարտականությունը հնարավորություն է ընձեռում ավելի հստակ սահմանելու վարույթի շրջանակներում երրորդ անձի դերը՝ արդարացիություն երաշխավորելով: Եթե երրորդ անձին դիմում են վեճի լուծում փնտրելու գործում ակտիվ մասնակցություն ունենալու համար, ապա նա պարտավոր է անվերապահորեն հարգել մրցակցային բանավեճի սկզբունքը և կողմերին լսել առանձին-առանձին միայն այն դեպքում, երբ դա ծառայում է համաձայնության հասնելու նպատակին: Կողմերից որևէ մեկին գաղտնի պայմաններում լսելու հնարավորությունը պետք է բացառել, եթե երրորդ անձից պահանջվում է ՎԼԱ գործընթացի ավարտին որոշում կայացնել կամ առաջարկություն ներկայացնել: Հանձնաժողովի 2001 թվականի ապրիլի 4-ի վերը նշված առաջարկության «Արդարացիություն» խորագրով գլխում նախատեսվում է, որ «եթե ցանկացած փուլում երրորդ անձը վեճի հնարավոր լուծում է առաջարկում, ապա կողմերից յուրաքանչյուրը պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու իր տեսակետը և մեկնաբանությունները մյուս կողմի ներկայացրած ցանկացած փաստարկի, տեղեկության կամ ապացույցի վերաբերյալ»:

82. Որպես կանոն, երրորդ անձը իրավունք չունի, ՎԼԱ ընթացակարգի ձախողվելու դեպքում, հետագայում միևնույն վեճի կապակցությամբ հանդես գալ որպես վկա կամ միջամտել որպես արբիտր, քանի որ հնարավոր է, որ ՎԼԱ ընթացակարգի շրջանակներում նա ստացած լինի որոշակի տեղեկություններ, որոնք պարտադիր չէ, որ հասանելի լինեն արբիտրին: Այնուհանդերձ, երրորդ անձին ներկայացվող գաղտնիության պահանջը կարող է չկիրառվել, եթե ՎԼԱ ընթացակարգի մասնակիցները թույլ են տալիս գաղտնի տեղեկությունները բացահայտել, կամ եթե երրորդ անձին, որն իր մասնագիտության բերումով ունի մասնագիտական գաղտնիություն պահպանելու պարտավորություն, կիրառվող իրավունքի համաձայն պարտադրվում է բացահայտել այդ տեղեկությունները:[122]

| |
|---|
| Հարց 10. Ինչպիսի՞ն է Հանձնաժողովի 1998 և 2001 թվականների առաջարկությունների կիրառման փորձը: |

[122] Օրինակ, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման կասկածի մասին օրենսդրությունը, որի օրինակ է 2001թ. նոյեմբերի 19-ի հրահանգը, որով փոփոխություններ են կատարվել «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման նպատակով ֆինանսական համակարգի օգտագործումը կանխելու մասին» 91/308/ԵՏՀ հրահանգում, որը, սակայն, նոտարներին, անկախ փաստաբաններին և իրավաբանական կազմակերպություններին ազատում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման կասկածի մասին տեղեկություններ հաղորդելու պարտականությունից այն դեպքում, երբ նրանք գործում են իրենց հաճախորդի համար՝ իրավական վարույթից առաջ, վարույթի ընթացքում կամ դրանից հետո, կամ հաճախորդի իրավական վիճակը գնահատելու ժամանակ: Այս կանոնը, ըստ երևույթին, օգտակար է նշված մասնագիտությունների համար դրանց տերերի՝ հաճախորդների համար որպես խորհրդատու հանդես գալու դեպքում, բայց ոչ այն ժամանակ, երբ նրանք հանդես են գալիս որպես ՎԼԱ մեխանիզմի համար պատասխանատու երրորդ անձ:

Հարց 11. Նշված երկու առաջարկություններով նախատեսված սկզբունքները կարո՞ղ են առանց տարբերակման կիրառվել սպառողական իրավունքից բացի, այլ ոլորտների՝ մասնավորապես քաղաքացիական և առևտրային իրավունքի նկատմամբ:

Հարց 12. Ձեր կարծիքով, առաջարկություններով նախատեսված սկզբունքներից ո՞րը կարող է ընդգրկվել բոլոր անդամ պետությունների օրենսդրության մեջ:

Հարց 13. Ձեր կարծիքով, կարգավորվող ոլորտներում, օրինակ՝ ընտանեկան իրավունքի բնագավառում անդամ պետությունների օրենսդրությունը պե՞տք է համապատասխանեցնել, որպեսզի ընթացակարգային երաշխիքների առումով սահմանվեն ընդհանուր սկզբունքներ:

Հարց 14. Ձեր կարծիքով, Եվրոպական միության կառույցները, սերտորեն համագործակցելով շահագրգիռ շրջանակների հետ, ի՞նչ նախաձեռնություններ պետք է ստանձնեն երրորդ անձանց համար պարտադիր էթիկայի կանոնների ուղղությամբ:

Հարց 15. Անդամ պետությունների օրենսդրությունը հարկավո՞ր է ներդաշնակեցնել այնպես, որ յուրաքանչյուր անդամ պետությունում երաշխավորված լինի ՎԼԱ ընթացակարգերի գաղտնիությունը:

Հարց 16. Եթե այո, ապա ինչպե՞ս և ի՞նչ չափով պետք է երաշխավորել գաղտնիությունը: Գաղտնիության երաշխիքներն ի՞նչ չափով պետք է կիրառվեն նաև ՎԼԱ ընթացակարգերի արդյունքների հրապարակման նկատմամբ:

**3.2.2.2 Համաձայնության վավերությունը**

83. Կողմերի համաձայնությունն ընթացակարգի կարևոր և, որոշ առումներով, նույնիսկ ամենազգայուն փուլն է: Իհարկե, հարկավոր է զգուշություն ցուցաբերել, որպեսզի կնքվող համաձայնությունը լինի իսկական: Եթե վերջնական համաձայնությունը չի արտացոլում կողմերի իրական ցանկությունները, այսինքն, այն փոխզիջումային տարբերակը, որ կողմերը պատրաստ են ընդունել, ներառյալ այն ամենը, ինչ դա ենթադրում է սկզբնական փուլում կողմերի արտահայտած ցանկություններից հրաժարվելու առումով, ապա ՎԼԱ մեխանիզմները չեն հասել իրենց հիմնական նպատակին, որն է՝ իսկապես լուծել վեճը և ձեռք բերել սոցիալական հաշտեցում: Հետևաբար, նման դեպքում կարելի է ակնկալել հետագա խնդիրներ: Օրինակ, համաձայնության վավերությունը կարող է վիճարկվել, կամ կարող է երրորդ անձի պատասխանատվության խնդիր բարձրացվել այն հիմքով, թե վերջինս վարույթի մասնակիցներից մեկից անարդարացի համաձայնություն է «կորզել» և այլն: Մասնավորապես, կողմերի միջև տնտեսական անհավասարակշռության դեպքում համաձայնագիրը կնքելու և ստորագրելու պահին հարկավոր է իրականացնել որոշակի պաշտպանական ձևականություն: Արտահայտված համաձայնության վավերությունը երաշխավորելու համար պետք է ձեռնարկվեն բոլոր քայլերը: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ համաձայնագիրն ստորագրելուց առաջ կողմերին պետք է տալ խորհելու որոշակի ժամանակ[123] կամ, համաձայնագիրն ստորագրելուց հետո, նրանց ընձեռել որոշակի ժամանակի ընթացքում այդ

[123] 2001թ. ապրիլի 4-ի առաջարկության «Արդարացիություն» գլխի համաձայն՝ «նախքան կողմերի միջև վեճի լուծման առաջարկված տարբերակը համաձայնեցնելը, նրանց պետք է ողջամիտ ժամանակ հատկացվի՝ այդ տարբերակի մասին խորհելու համար»:

համաձայնությունից հրաժարվելու իրավունք:[124] Նաև անհրաժեշտ է վերլուծել հաստատման փուլ նախատեսելու հնարավորությունը, որում պարզվում է համաձայնության վավերությունը, նախքան դրա՝ կատարման ենթակա որոշում դառնալը: Այս ընթացակարգի համար պատասխանատու կլիներ դատավորը կամ նոտարը, չնայած որոշ թեմատիկ ոլորտներում նրանց փոխարեն կարող էին լինել մասնագիտացած մարմինները, օրինակ՝ Առևտրի պալատները:

### 3.2.2.3 ՎԼԱ ընթացակարգերի արդյունավետությունը

84. Սպառողների պաշտպանության իրավունքի ոլորտում հնարավոր է, որ երրորդ անձից պահանջվի վեճի լուծման վերաբերյալ ընդունել որոշակի պաշտոնական դիրքորոշում որոշման տեսքով, որը կարող է կողմի համար պարտադիր լինել: Այդպես է, օրինակ, հաճախորդների իրավունքների պաշտպանների (օմբուդսմանների) դեպքում, որոնք նշանակվում են որոշակի մասնագիտական ոլորտների, օրինակ՝ բանկերի և ապահովագրական ընկերությունների կողմից, և որոնց որոշումները պարտադիր են համակարգի մեջ մտնող ընկերությունների համար: Այս պարագայում, կայացված որոշման արդյունավետությունը կարելի է հեշտորեն գնահատել շուկայահանման իմաստով: Եթե նշված մասնագետներն իրոք չեն կատարում որոշման պահանջները, ապա նրանք ռիսկի են դիմում, քանի որ որոշումը կարող է հրապարակվել, կամ եթե նրանք մտնում են առևտրային այնպիսի համակարգի մեջ, որն, օրինակ, որակի պիտակներ է շնորհում, ապա կարող են հեռացվել այդ համակարգից:

85. Այն դեպքում, երբ ՎԼԱ ընթացակարգի արդյունքում կողմերը հանգում են համաձայնության, կարելի է հարց բարձրացնել այդ համաձայնության գործողության շրջանակների մասին, հատկապես միջսահմանային վեճի համատեքստում: Ըստ էության, ՎԼԱ մեխանիզմների կիրառման արդյունքում կնքվող համաձայնության իրավական որակման խնդրից է կախված ՎԼԱ մեխանիզմների արդյունավետությունը: Այնուամենայնիվ, ՎԼԱ մեխանիզմներից ծագող համաձայնությունների համար անդամ պետություններում օգտագործվող անվանումների բազմազանության պատճառով իրավիճակն էլ ավելի է խճճվում: Որոշ անդամ պետություններում ՎԼԱ ընթացակարգի արդյունքում հաճախ կարող է կնքվել պարզ գործարք, սակայն հնարավոր են նաև այլ պայմանավորվածություններ, ինչպես օրինակ հաշտեցման կամ միջնորդության արձանագրությունները: Բոլոր այդ պայմանավորվածությունները փաստացի «գործարքներ» են՝ անկախ դրանց անվանումներից: Ուստի, կողմերի միջև

---

124 Իրավական այս մեթոդը լայն տարածում ունի Համայնքի իրավունքում: Տե՛ս, օրինակ, «Առևտրային հաստատություններից դուրս բանակցված պայմանագրերի դեպքում սպառողների պաշտպանության մասին» Խորհրդի 1985թ. դեկտեմբերի 20-ի 85/577/ԵՏՀ հրահանգը, ՊՏ L 372, 31.12.1985թ., էջ 31, «Կյանքի ուղղակի ապահովագրությանը վերաբերող օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի համաձայնեցման մասին» Խորհրդի 1990թ. նոյեմբերի 8-ի 90/619/ԵՏՀ հրահանգը, որով սահմանվում են ծառայություններ մատուցելու ազատության արդյունավետ իրականացմանը նպաստող պայմաններ, և որով փոփոխվում է 79/267/ԵՏՀ հրահանգը (Կյանքի ապահովագրության մասին երկրորդ հրահանգ), ՊՏ L 330, 29.11.1990թ., էջ 50: Տե՛ս նաև «Անշարժ գույքի տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի (timeshare) ձեռքբերման պայմանագրերի որոշ ասպեկտների հետ կապված գնորդների պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1994թ. հոկտեմբերի 26-ի հրահանգը, ՊՏ L 280, 29.10.1994թ., էջ 83, և «Հեռակա կարգով բանակցված պայմանագրերի առնչությամբ սպառողների պաշտպանության մասին» 1997թ. մայիսի 20-ի 97/7/ԵՀ հրահանգը, ՊՏ L 144, 4.06.1997թ., էջ 19:

համաձայնությունները կարող են ի կատար ածվել այնքանով, որքանով դրանք դառնում են կատարման ենթակա այն պատճառով, որ դատավորը հաստատել է և դրանք ի կատար ածելու մասին որոշում է արձակել, կամ այն պատճառով, որ կողմերն իրավունք ունեն ստանալու համապատասխան պետական պաշտոնյայի, օրինակ՝ նոտարի մոտ ձևակերպված նույնական փաստաթուղթ: Ի վերջո, որոշ անդամ պետություններում ՎԼԱ ընթացակարգի հաստատված արձանագրության մեջ արտացոլված գործարքն ինքնին համարվում է կատարման ենթակա:[125,126] Այնուհանդերձ, գործարքը բոլոր անդամ պետություններում չունի իրավաբանական միևնույն ուժը: Հետևաբար, այդ համաձայնության վավերության (ուստի նաև դրա գործողության) խնդիրը կախված է կոլիզիոն նորմերով որոշված իրավունքից:[127]

86. Ի հավելումն, իրավական կարգավորումը Բրյուսելի կոնվենցիայի և Բրյուսելի I կանոնակարգի[128] իմաստով պարզ պայմանագիր է, որը կնքվում է դատավորի ներկայությամբ, որով կողմերը փոխադարձ զիջումների միջոցով վերջ են դնում վեճին: Բացի այդ, ինչպես Դատարանը վճռեց 1968 թվականին Բրյուսելի կոնվենցիայի հետ կապված գործի վերաբերյալ, որին փոխարինելու եկավ «Բրյուսելի I կանոնակարգը»,[129] նման լուծումը Կոնվենցիայի 25-րդ հոդվածի իմաստով չի համարվում «որոշում», քանի որ «դատարանում ձեռք բերվող լուծումն իր բնույթով պայմանագրային է, այն իմաստով, որ դրա դրույթները առաջին հերթին և ամենից շատ պայմանավորված են կողմերի մտադրություններով»: Եթե միևնույն նպատակով իրականացվող՝ վիճարկվող դատավարության և վեճի լուծման այլընտրանքային մեխանիզմների արդյունքում ձևավորվող համաձայնության միջև առկա է որոշակի հակասություն կամ անհամապատասխանություն, ապա ՎԼԱ համաձայնությունը, որը նման է իրավական գործարքի, հիմք չի տալիս նշված այդ վճռի կատարման (էկզեկվատուրայի) պահանջին առարկելու համար:

87. Ավելին, նույնական փաստաթղթերի համար Բրյուսելի կոնվենցիայով և Բրյուսելի I կանոնակարգով նախատեսված է էկզեկվատուրայի պարզեցված համակարգ, որով հնարավոր է դառնում այդ փաստաթղթերի շրջանառությունը Եվրոպական միության

---

125 Եթե դատարանը, որտեղ կնքվել է համաձայնության գործարքը, ճանաչվում է հողի դատական վարչության կողմից Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 794-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն:

126 1998 թվականից ի վեր Ֆրանսիայի Քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի հոդված 1441-4–ով հաշտության համաձայնության կողմերից մեկի դիմումի հիման վրա "*Tribunal de Grande Instance*"-ի նախագահին թույլատրվում է որոշում կայացնել իրեն ներկայացված հաշտության ակտը կատարման ենթակա ճանաչելու մասին: Այնուհանդերձ, այս կարգով հաստատված հաշտության համաձայնության իրավական բնույթը դեռ բանավեճի առարկա է, քանի որ պարզ չէ՝ դա որպես այդպիսին դատական որոշում է, թե ավելի շուտ՝ պայմանագրի կարգավիճակ ունի:

127 Այս ոլորտում Համայնքի մակարդակով միասնական կոլիզիոն նորմեր են սահմանվել «Պայմանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքի մասին» 1980թ. հունիսի 19-ի Հռոմի կոնվենցիայով, որի համահավաք տարբերակը հրապարակվել է՝ ՊՏ C 27, 26.01.1998թ., էջ 36:

128 Կանոնակարգի 58-րդ հոդված:

129 Գործ C-414/92 *Solo Kleinmotoren* [1994] ECR I-2237 (դատավճիռը կայացվել է 1994 թ. հունիսի 2-ին):

տարածքում: Դատարանը,[130] մեջբերելով Լուգանոյի կոնվենցիայի վերաբերյալ Ջենարդի և Մյոլերի զեկույցը (Jenard-Möller),[131] վերահաստատում է, որ փաստաթուղթը նույնական համարելու համար պետք է բավարարված լինեն հետևյալ պայմանները. «փաստաթղթի նույնականությունը պետք է հաստատված լինի պետական մարմնի կողմից. այդ նույնականությունը պետք է վերաբերի փաստաթղթի բովանդակությանը, և ոչ, օրինակ, միայն ստորագրությանը: Փաստաթուղթը պետք է ինքնին ենթակա լինի կատարման այն պետությունում, որտեղ այն կազմվել է»: Այս հիմքով դատարանը եզրահանգում է , որ «Պարտքային պարտավորության ճանաչումը, որը ենթակա է կատարման ծագման պետության իրավունքով, և որի նույնականությունը չի հաստատվել որևէ պետական մարմնի կամ այդ նպատակով տվյալ պետության կողմից լիազորված այլ մարմնի կողմից, չի համարվում նույնական փաստաթուղթ Բրյուսելի կոնվենցիայի 50-րդ հոդվածի իմաստով»: Առաջարկվել է, որ ՎԼԱ ընթացակարգերի որոշ արձանագրություններ, եթե դրանք կազմվել են պետական մարմինների կողմից և դարձել են կատարման ենթակա, համարվեն նույնական փաստաթղթեր Բրյուսելի I կանոնակարգի իմաստով: Նշված կանոնները, սակայն, չեն կիրառվում այն փաստաթղթերի նկատմամբ, որոնք չեն կազմվում կողմերի ցանկությունների հիման վրա և չեն հաստատվում հանրային մարմնի (օրինակ՝ դատավորի կամ նոտարի) կողմից: Հաշվի առնելով նշված հանգամանքները՝ մեծ տարբերություններ կան ՎԼԱ մեխանիզմների կիրառման արդյունքում առաջացող համաձայնությունների բնույթի, դրանց իրավական ուժի և, հետևաբար, եվրոպական մակարդակով դրանց միջազգային գործողության առումներով: Ավելին, դատական վարույթից խուսափելու փորձը, ինչում էլ հենց կայանում է ՎԼԱ մեխանիզմների ողջ իմաստը, կողմերին վերստին հարկադրում է դիմել դատավորին, որպեսզի վերջինս ՎԼԱ մեխանիզմների կիրառման արդյունքում կնքվող համաձայնությանը պարտադիր բնույթ հաղորդի:

Հարց 17. Ձեր կարծիքով, Համայնքի մակարդակով պե՞տք է լինի կանոն, որով ՎԼԱ ընթացակարգի ավարտից հետո, նախքան համաձայնագիրն ստորագրելը, նախատեսվում է խորհելու ժամանակաշրջան կամ համաձայնությունն ստորագրելուց հետո որոշակի ժամանակահատվածի ընթացքում դրանից հրաժարվելու իրավունք: Կամ, ավելի ճի՞շտ չէր լինի այս հարցը լուծել երրորդ անձանց նկատմամբ կիրառվող էթիկայի կանոնների շրջանակում:

Հարց 18. Անհրաժե՞շտ է արդյոք անդամ պետություններում ավելի արդյունավետ դարձնել ՎԼԱ մեխանիզմների մասին համաձայնությունները: Ո՞րն է Եվրոպական միության այլ անդամ պետություններում ՎԼԱ մեխանիզմների մասին համաձայնությունների ճանաչման և կատարման հարցի լավագույն լուծումը: ՎԼԱ մեխանիզմների մասին համաձայնությունները կատարման ենթակա դարձնելու համար պե՞տք է ընդունել հատուկ կանոններ: Եթե այո, ապա դրանց կիրառության ի՞նչ երաշխիքներ պետք է նախատեսել:

130 Գործ C-260/97 *Unibank AS v Flemming G. Christensen* [1999] ECR I-3715 (վճիռը կայացվել է 1999թ. հունիսի 17-ին):

131 ՊՏ C 189, 28.07.1990թ., էջ 57, 72–րդ պարբերություն:

### 3.2.3 Երրորդ անձինք պե՞տք է ունենան որոշակի կարգավիճակ

88. Ըստ էության, ՎԼԱ ընթացակարգի համար պատասխանատու երրորդ անձին կամ անձանց ընտրում են վեճի կողմերը: Կողմերը նրանց նշանակում են անմիջականորեն, կամ այդ նպատակով դիմում երրորդ անձ նշանակելու լիազորություն ունեցող մարմնի: Ընտրության գործընթացը հեշտանում է, երբ երրորդ անձը տալիս է էթիկայի այն կանոններից բխող որոշակի երաշխիքներ, որոնք պարտավորվել է պահպանել, ինչպես արդեն նշվել է: Ի հավելումն, երրորդ անձանց վերապատրաստումը բարձրացնում է նրանց հավատարմագրման հարցը:

#### 3.2.3.1 Երրորդ անձանց վերապատրաստումը

89. ՎԼԱ ընթացակարգի որակն ըստ էության կախված է ՎԼԱ մեխանիզմների համար պատասխանատու երրորդ անձի իրավասությունից: ՎԼԱ մեխանիզմների մեթոդներին տիրապետելու համար անհրաժեշտ է պատշաճ վերապատրաստում: Հետևաբար, մասնագիտական վերապատրաստումը կարևորագույն նշանակություն ունի ոչ միայն ՎԼԱ մեխանիզմների գործելու և որակի և հետևաբար դրանցից օգտվողների իրավունքների պաշտպանության տեսանկյունից, այլ նաև՝ Համաձայնագրի 49-րդ հոդվածով երաշխավորված՝ ՎԼԱ ծառայություններ ազատորեն տրամադրելու տեսանկյունից:

90. Դատավորներին նույնպես անհրաժեշտ է հատուկ վերապատրաստում: Երրորդ անձինք, որոնք ներգրավվում են դատական վարույթի շրջանակներում ՎԼԱ ընթացակարգ անցկացնելու համար, պետք է ապացուցեն, որ ունեն անհրաժեշտ հմտություններ, վերապատրաստում կամ նվազագույն փորձ, ինչը յուրաքանչյուր դեպքի համար առանձին է գնահատվում դատավորների կողմից կամ ճանաչվում հավատարմագրման ձևով: Այնուհանդերձ, ՎԼԱ պայմանագրային ընթացակարգերով զբաղվող երրորդ անձանց նման պահանջներ չեն ներկայացվում:

91. Անկախ կարգավորվող մասնագիտության տեր լինելու կամ չլինելու հանգամանքից՝ երրորդ անձինք երբեմն ասոցիացիաների անդամներ են: Այդ ասոցիացիաները քաջալերում են իրենց անդամներին հաճախել վերապատրաստման դասընթացների կամ, երբեմն, իրենք են ՎԼԱ մեխանիզմների վերաբերյալ վերապատրաստումներ անցկացնում և դրանցից բացի, ներդնում իրենց անդամների սերտիֆիկացման, հավատարմագրման և պարբերական գնահատման համակարգ: Ավելին, այդ ասոցիացիաները մշակում են էթիկայի կանոնագրքեր և ընթացակարգային կանոններ: Թերևս, կարևոր կլինի ՎԼԱ մեխանիզմների հետ կապված փորձաստուգում սահմանելը, որպեսզի այն դեպքում, երբ երրորդ անձը կարգավորվող մասնագիտության ներկայացուցիչ չէ, հնարավոր լինի ստուգել նրա որակավորումը և, այսպիով, երաշխավորել ազատ տեղաշարժվելու նրա իրավունքը:

#### 3.2.3.2 Երրորդ անձանց հավատարմագրումը

92. Պետական մարմինների խնդիրներից մեկը երրորդ անձանց բանիմացության երաշխավորման համար անհրաժեշտ նվազագույն երաշխիքների առկայությունն ապահովելն է: Հարկավոր է որոշել, թե արդյոք պետական մարմինները պետք է օժանդակեն պրակտիկ մասնագետներին՝ ներդնելով երրորդ անձանց

հավատարմագրման համակարգեր, որոնք, սակայն, չպետք է վտանգեն ՎԼԱ ընթացակարգերի ճկունությունը և պարզությունը:[132]

93. Եթե երրորդ անձինք կարգավորվող մասնագիտության ներկայացուցիչներ են, կկիրառվեն անդամ պետությունների միջև որակավորումների ճանաչման ընդհանուր համակարգը[133] կամ ծառայությունների մատուցումը և իրավաբանների՝ հիմնադրման իրավունքի իրականացումը խթանելուն ուղղված հրահանգները:[134] Հակառակ դեպքում կականկալվեն դժվարություններ:

### 3.2.3.3 Երրորդ անձանց պատասխանատվությունը

94. Ի վերջո, պետք է անդրադառնալ երրորդ անձանց պատասխանատվության խնդրին: Երրորդ անձինք կարող են պատասխանատվության կանչվել ընթացակարգին իրենց միջամտության հետևանքների համար և անձնական միջամտության դեպքում՝ որպես անհատ, և նույնիսկ, որոշ դեպքերում, հանրային նշանակության հարցերում, երբ ՎԼԱ գործընթացում տեղի են ունեցել խախտումներ: Որպես օրինակ կարելի է բերել գաղտնիության պահանջի խախտումը կամ անկողմնակալության փաստացի բացակայությունը, որից օգտվել է կողմերից մեկը: Երրորդ անձը կարող է նաև պատասխանատվության ենթարկվել անդամ պետությունների ընդհանուր քաղաքացիական պատասխանատվության իրավունքով, նույնիսկ եթե անդամ պետությունները չունեն հատուկ նորմեր միջնորդների կամ հաշտարարների պատասխանատվության մասին:[135] Կարելի է նախատեսել պատասխանատվության

---

132 Տե՛ս, մասնավորապես, Եվրոպական պառլամենտի եզրակացությունը վերը նշված «Բրյուսելի I կանոնակարգի» նախագծի վերաբերյալ, 35-րդ և 39-րդ փոփոխությունները, ՊՏ C 146, 17.05.2001թ., էջ 94:

133 Եվրոպական հանձնաժողովի ծառայությունների 2001թ. մայիսի 21-ի աշխատանքային փաստաթուղթը մասնագիտական ճանաչման ապագա ռեժիմի մասին. http://europa.eu.int/comm/internal_market/en/qualifications/consultation_en.pdf

134 «Փաստաբանների կողմից ծառայություններ մատուցելու ազատության արդյունավետ իրականացումն ապահովելու մասին» Խորհրդի 1977թ. մարտի 22-ի 77/249/ԵՏՀ հրահանգը, ՊՏ L 78, 26.03.1977թ., էջ 17, «Որակավորման ստացման վայրի անդամ պետությունից բացի որևէ այլ անդամ պետությունում մշտական կարգով փաստաբանի մասնագիտական աշխատանքի կատարումը հնարավոր դարձնելու մասին» Պառլամենտի և Խորհրդի 1998թ. փետրվարի 16-ի 98/5/ԵՀ հրահանգը, ՊՏ L 77, 14.03.1998թ., էջ 36, «Առնվազն երեք տարի տևող մասնագիտական կրթության և վերապատրաստման ավարտին տրվող բարձրագույն կրթության դիպլոմների ճանաչման ընդհանուր համակարգի մասին» Խորհրդի 1988թ. դեկտեմբերի 21-ի 89/48/ԵՏՀ հրահանգը, ՊՏ L 19, 24.01.1989թ., էջ 16, «Մասնագիտական կրթության և վերապատրաստման ճանաչման երկրորդ ընդհանուր համակարգի մասին» Խորհրդի 1992թ. հունիսի 18-ի 92/51/ԵՏՀ հրահանգը, որով լրացումներ են կատարվել 89/48/ԵՏՀ հրահանգում, ՊՏ L 209, 24.03.1992թ., էջ 25, ազատականացման և անցումային միջոցառումների մասին հրահանգներով նախատեսված մասնագիտական գործունեության տեսակների առնչությամբ որակավորումների ճանաչման մեխանիզմ ստեղծելու և որակավորումների ճանաչման ընդհանուր համակարգերում լրացումներ կատարելու մասին» Պառլամենտի և Խորհրդի 1999թ. հունիսի 7-ի 1999/42/ԵՀ հրահանգը, ՊՏ L 201, 31.07.1999թ., էջ 77:

135 Ամեն դեպքում դա չի նշվել հարցաշարին տրված պատասխաններում: Որոշ պետություններում գոյություն ունեն ստույգ կանոններ, որոնք կարգավորում են նրանց նշանակումը և որակավորման պահանջները: Ուստի, պետք է նախատեսված լինի նաև պարտավորությունները չկատարելու դեպքում նրանց պաշտոնանկ անելու կամ հեռացնելու հնարավորությունը: Ֆրանսիայում, օրինակ, Արդարադատության

որոշակի համակարգի ստեղծում կամ առնվազն որոշակի կանոններ, որոնցով կորոշվի երրորդ անձի ստույգ դերը վարույթում (հաճախ այդ դերը սահմանափակվում է «կատալիզատորի» գործառույթով): Ամեն դեպքում, պետք է հավանաբար փորձենք խուսափել խիստ պարտադիր միջոցներ սահմանելուց, որով կսահմանափակվեն կողմերի ցանկություններն ու նախաձեռնությունները:

Հարց 19. Ձեր կարծիքով, Համայնքի կառույցներն ի՞նչ նախաձեռնություններ պետք է ստանձնեն երրորդ անձանց վերապատրաստմանն օժանդակելու համար:

Հարց 20. Հարկավո՞ր է օժանդակություն ցուցաբերել երրորդ անձանց հավատարմագրման նպատակով նրանց վերապատրաստման որոշակի նվազագույն չափանիշներ սահմանելու փորձերին:

Հարց 21. Հարկավո՞ր է ընդունել հատուկ կանոններ երրորդ անձանց պատասխանատվության վերաբերյալ: Եթե այո, ապա ինչպիսի՞ կանոններ: Այս ոլորտում ի՞նչ դեր պետք է խաղան էթիկայի կանոնագրքերը:

հաշտարարների մասին 1978թ. մարտի 20-ի որոշման հոդված 3-2–ով նախատեսվում է, որ դատական իշխանության ներկայացուցիչը կարող է, պատճառաբանված որոշման հիման վրա, շահագրգիռ կողմերին լսելուց հետո, նրանց ազատել զբաղեցրած պաշտոնից նախքան լիազորությունների ժամկետի ավարտը:

ՀԱՐՑԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Հարց 1. Գոյություն ունե՞ն խնդիրներ, ինչպիսիք են ՎԼԱ մեխանիզմների վերաբերյալ Համայնքի գործողությունների հիմնավորումը: Եթե այո, ապա որո՞նք են դրանք: Ի՞նչպիսին է Ձեր կարծիքը ՎԼԱ մեխանիզմների նկատմամբ ընդհանուր մոտեցման վերաբերյալ, որ պետք է որդեգրեն Եվրոպական միության կառույցները, և ինչպիսի՞ն պետք է լինի ԵՄ կառույցների այդպիսի նախաձեռնությունների շրջանակը:

Հարց 2. Իրականացվելիք նախաձեռնությունները պե՞տք է սահմանափակել կոնկրետ մեկ ոլորտի (օրինակ, առևտրային կամ ընտանեկան իրավունք) նկատմամբ կիրառվող սկզբունքների սահմանմամբ՝ ոլորտ առ ոլորտ, և այսպիսով խտրականություն դնել տարբեր ոլորտների միջև, թե՞ պետք է հնարավորինս ընդգրկել քաղաքացիական և առևտրային իրավունքով կարգավորվող բոլոր ոլորտները:

Հարց 3. Իրականացվելիք նախաձեռնությունները պե՞տք է առանձին-առանձին անդրադառնան վեճերի առցանց լուծման (ՎԱԼ) (սա նոր զարգացող ոլորտ է, որը տարբերվում է մյուսներից՝ պայմանավորված նորարարության բարձր մակարդակով և նոր տեխնոլոգիաների զարգացման մեծ տեմպերով) և ավանդական մեթոդներին, թե՞ ընդհակառակը՝ տարածվեն բոլոր մեթոդների վրա՝ առանց որևէ տարբերակման:

Հարց 4. Ինչպե՞ս կարելի է ՎԼԱ մեխանիզմների դիմելու հնարավորությունը ներդնել ընտանեկան իրավունքի ոլորտում:

Հարց 5. Հարկավո՞ր է ներդաշնակեցնել անդամ պետությունների օրենսդրությունն այնպես, որ յուրաքանչյուր անդամ պետությունում ՎԼԱ մեխանիզմների մասին վերապահումներն ունենան միևնույն իրավական արժեքը:

Հարց 6. Եթե այո, ապա այդ վերապահումների վավերությունը պե՞տք է համընդհանուր կարգով ընդունվի, թե՞ այդ վավերությունը պետք է սահմանափակվի այն դեպքերով, երբ դրանք առկա են անդամակցության պայմանագրերում ընդհանրապես կամ, սպառողների հետ պայմանագրերում մասնավորապես:

Հարց 7. Ամեն դեպքում, այդ դրույթները գործողության ի՞նչ շրջանակ պետք է ունենան:

Հարց 8. Հարկավո՞ր է համարել, որ նշված դրույթների խախտման դեպքում դատարանը վեճը քննելու իրավասություն չունի, գոնե տվյալ պահին:

Հարց 9. Հարկավո՞ր է ներդաշնակեցնել անդամ պետությունների օրենսդրությունն այնպես, որ բոլոր անդամ պետություններում ՎԼԱ ընթացակարգի դիմելու դեպքում կասեցվի դատարան դիմելու համար սահմանված վաղեմության ժամկետի հաշվարկը:

Հարց 10. Ինչպիսի՞ն է Հանձնաժողովի 1998 թվականի և 2001 թվականի առաջարկությունների կիրառման փորձը:

Հարց 11. Նշված երկու առաջարկություններով նախատեսված սկզբունքները կարո՞ղ են առանց տարբերակման կիրառվել սպառողական իրավունքից բացի, այլ ոլորտների՝ մասնավորապես քաղաքացիական և առևտրային իրավունքի նկատմամբ:

Հարց 12. Ձեր կարծիքով, առաջարկություններով նախատեսված սկզբունքներից ո՞րը կարող է ընդգրկվել բոլոր անդամ պետությունների օրենսդրության մեջ:

Հարց 13. Ձեր կարծիքով, կարգավորվող ոլորտներում, օրինակ՝ ընտանեկան իրավունքի բնագավառում անդամ պետությունների օրենսդրությունը պե՞տք է ներդաշնակեցնել, որպեսզի ընթացակարգային երաշխիքների առումով սահմանվեն ընդհանուր սկզբունքներ:

Հարց 14. Ձեր կարծիքով, Եվրոպական միության կառույցները, սերտորեն համագործակցելով շահագրգիռ շրջանակների հետ, ի՞նչ նախաձեռնություններ պետք է ստանձնեն երրորդ անձանց նկատմամբ էթիկայի պարտադիր կանոնների ուղղությամբ:

Հարց 15. Անդամ պետությունների օրենսդրությունը հարկավո՞ր է ներդաշնակեցնել այնպես, որ յուրաքանչյուր անդամ պետությունում երաշխավորված լինի ՎԼԱ ընթացակարգերի գաղտնիությունը:

Հարց 16. Եթե այո, ապա ինչպե՞ս և ի՞նչ չափով պետք է երաշխավորել գաղտնիությունը: Գաղտնիության երաշխիքներն ի՞նչ չափով պետք է կիրառվեն նաև ՎԼԱ ընթացակարգերի արդյունքների հրապարակման նկատմամբ:

Հարց 17. Ձեր կարծիքով, Համայնքի մակարդակով պե՞տք է լինի կանոն, որով ՎԼԱ ընթացակարգի ավարտից հետո, նախքան համաձայնագիրն ստորագրելը, նախատեսվում է խորհելու ժամանակաշրջան կամ համաձայնության ստորագրումից հետո որոշակի ժամանակահատվածի ընթացքում դրանից հրաժարվելու իրավունք: Կամ, ավելի ճի՞շտ չէր լինի այս հարցը լուծել երրորդ անձանց նկատմամբ կիրառվող էթիկայի կանոնների շրջանակում:

Հարց 18. Անհրաժե՞շտ է արդյոք անդամ պետություններում ավելի արդյունավետ դարձնել ՎԼԱ մեխանիզմների վերաբերյալ համաձայնությունները: Ո՞րն է Եվրոպական միության այլ անդամ պետություններում ՎԼԱ մեխանիզմների վերաբերյալ համաձայնությունների ճանաչման և կատարման հարցի լավագույն լուծումը: ՎԼԱ մեխանիզմների վերաբերյալ համաձայնությունները կատարման ենթակա դարձնելու համար պե՞տք է ընդունել որոշակի կանոններ: Եթե այո, ապա դրանց կիրառության ի՞նչ երաշխիքներ պետք է նախատեսել:

Հարց 19. Ձեր կարծիքով, Համայնքի կառույցներն ի՞նչ նախաձեռնություններ պետք է ստանձնեն երրորդ անձանց վերապատրաստմանն օժանդակելու համար:

Հարց 20. Հարկավո՞ր է օժանդակություն ցուցաբերել երրորդ անձանց հավատարմագրման նպատակով նրանց վերապատրաստման որոշակի նվազագույն չափանիշներ սահմանելու փորձերին:

Հարց 21. Հարկավո՞ր է ընդունել հատուկ կանոններ երրորդ անձանց պատասխանատվության վերաբերյալ: Եթե այո, ապա ինչպիսի՞ կանոններ: Այս ոլորտում ի՞նչ դեր պետք է խաղան էթիկայի կանոնագրքերը: